ՀՀ կառավարության մեջ Աղբալյանն ստանձնեց արվեստի և կրթության ոլորտը՝ ստեղծեց Հայ գրողների ընկերությունը, սատարեց «Պանդոկ» գրական խմբակի գործունեությանը:
1919 թ. հոկտեմբերի 16-ին Գրական ընկերությունը Պառլամետի դահլիճում հրավիրում է երեկոի: Ն. Աղբալյանը խոսել է մոտ մեկուկես ժամ և ըստ ամենայնի ներկայացրել և՛ թեմայով, և՛ պոետիկայով նոր բանաստեղծ Ե. Չարենցին: Ելույթ են ունեցել գրական տարբեր հեղինակություններ: Չարենցը դարձել է որոնված անուն:
Ինքը՝ Չարենցը, այդ երեկոյին ներկա չի եղել, քանի որ Կարսի մարզում զբաղված էր ուսուցչությամբ: Աղբալյանի զեկուցման մասին տեղեկանում է մամուլից և ավելի, քան

* *Հոդվածը ներկայացվել է 25.12.23, գրախոսվել է 25.01.24, ընդունվել է տպագրության 30.04.24:*

երեք ամիս հետո ներկայանում նրան: Վերջինս նրան ջերմորեն է դիմավորում և նախարարությունում առաջարկում համեստ մի պաշտոն: Դժվար ժամանակներ էին. Աղբալյանը Չարենցին տալիս է ապրելու և ստեղծագործելու հնարավորություն:
Այս երկու մեծությունների գրական առնչությունը հայ գրականության պատմության հիշարժան փաստ է:

Ներածություն

Նիկոլ Աղբալյանը՝ որպես հանրային կրթության և արվեստի նախարար, զբաղված էր նորաստեղծ հանրապետության կրթամշակութային շինարարությամբ:

1919 թ. սեպտեմբերի 28-ին նրա նախագահությամբ Երևանում հիմնադրվում է **Հայաստանի գրական ընկերությունը**[1]**:** Մեծ գյուղի՝ մայրագյուղի տպավորություն թողնող Երևանը նաև այսպիսի նախաձեռնություններով պետք է աստիճանաբար նմանվեր մայրաքաղաքի: Ընկերության անդամներ են ընտրվում Լեռ Կամսարը, Բախշի Իշխանյանը, Համբարձում Մազմանյանը, Վեսպերը, Շահան Նաթալին, Խաչիկ Սամվելյանը, Արշավիր Խոնդկարյանը և ուրիշներ:

Գրական գործի կազմակերպման նպատակով նույն օրերին ստեղծվում է նաև **«Պանդոկ» գրական ակումբը.** «Երևանում կազմակերպվել էր Հայաստանի գրողների միություն: Գրողների միությունից զատ՝ այդ միության մոտ 15 անդամներից կազմվել էր գրական խմբակ «Պանդոկ» անունով» (Վարդգես Ահարոնյան, «Լևոն Շանթը իր մասին»)[2]: Հ. Թումանյանի «Վերնատան» օրինակով գաղափարը Լ. Շանթինն էր, «Պանդոկ» անունն առաջարկել է բանաստեղծ Ոստանիկը: Ավագներից հավաքներին մասնակցել են Լ. Շանթն ու Ն. Աղբալյանը, երիտասարդներից՝ Ստ. Զորյանը, Ռենը (Ռուբեն Վարդանյան), Գառնիկ Քալաշյանը, Ոստանիկ Հովհաննիսյանը, Վահրամ Թերզիբաշյանը, Անուրջը, Դավիթ Անանունը, Վահան Խորենին, Արմենուհի Տիգրանյանը, Պերճուհի Բսեղյանը, Անուշ Քալաշյանը, 1920 թ. հունվարի վերջին Երևանում հաստատվելուց հետո նաև՝ Ե. Չարենցը: Շաբաթը մեկ խմբակը հավաքվում էր «Ռոստոմ» գրադարանում, թիթեղյա վառարանի շուրջ, որի նավթը նախարարության պահեստից տրամադրում էր Ն. Աղբալյանը: Կարդում էին իրենց նոր գործերը, քննարկում, բանավիճում:

[1] «Հայաստանի կոոպերացիա», 15.10.1919, թիվ 16:
[2] «Լևոն Շանթ: Մարդը և գործը», 2019, 20:

«Մի նոր բանաստեղծ – Չարենց»

Հայաստանի Գրական ընկերությունը կազմակերպում է միջոցառումներ, որոնցից հիշարժանը եղել է երկրորդ երեկոն՝ «Մի նոր բանաստեղծ – Չարենց»: Ե. Չարենցը Ն. Աղբալյանի ուշադրությունը գրավել էր ավելի վաղ: 1917 թ. ամռան մտաբերումով Նվարդ Թումանյանը գրում է. «Վերադարձանք Թիֆլիս: Նիկոլ Աղբալյանն էր մոտը [Հ. Թումանյանի – Դ. Գ.]. «Օհաննե՛ս, քեզ ո՞նց է դուր գալիս մեր էս նոր բանաստեղծը. գլխի՞ ես ում մասին եմ ասում՝ Չարենցի: Երեկ ձեռքիս նրա նոր գիրքն էր՝ «Ծիածանը». մի կարդա, տես, տաղանդավոր տղա է երևում: Նոր բան է ասում, էն էլ նոր ձևով. թարմություն կա մեջը, թափ ունի. մտքումս կա մի դասախոսություն կարդամ նրա մասին»:

Որոշեցին գրողների ընկերության հերթական երեկույթներից մեկը նվիրել Չարենցին»[3]:

Ահա դասախոսության ազդագիրը. «Հիշեցնում ենք հայ գրասերներին, որ այսօր պառլամենտի դահլիճում երեկոյան ժամը 8-ին կայանալու է Հայաստանի գրական ընկերության հերթական ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ, ուր Ն. Աղբալյանը խոսելու է՝ «Մի նոր բանաստեղծ – Չարենցի» մասին»[4]:

Մարդիկ եկել էին տոմսակներով, դահլիճը լիքն էր:

Մինչ այդ նախատեսվել էր Ե. Չարենցին նվիրված երեկոն անցկացնել հոկտեմբերի 11-ին, բայց հետաձգվել էր:

ՀՌԿ օրգան «Հայաստանի ձայն» հասարակական, քաղաքական և գրական թերթը հոկտեմբերի 30-ի 9-րդ համարում Հ.Ս. ստորագրությամբ լրատվության մեջ հայտնում է. «Հայաստանի Գրական ընկերության Բ. գրական երեկոն տեղի ունեցավ ամսույս 16-ին, շաբաթ օրը՝ երեկոյան ժամը 8-ին, պարլամենտի սրահին մեջ:

Երեկույթը կազմված էր երկու մասե, գրական և գեղարվեստական: Ա. Բաժնի մեջ ընկերության պատվավոր նախագահ Ն. Աղբալյան, ելույթ ունենալով «Եղիշե Չարենց իբրև նորագույն բանաստեղծ», շատ կոնկրետ կերպով ուրվագծեց անձանոթ բանաստեղծի բոլոր երկերու բնույթը և մանավանդ անոր նորագույն գրական ուղղությունը ռուսահայ գրողներու շարքին մեջ: Նա, վերջին տաս[ը] տարվա ընթացքին տիրող Տերյանի մելամաղձոտ և տարտամ

---

[3] **Թումանյան** 1987, 162–163:

[4] «Հայաստանի ձայն», 30.10.1919, թիվ 9:

տոնեն ազատվելով, ստեղծած է մի նոր տեսակի գրականություն, որ մեր նոր սերնդի հերոսական ընդունակությունները կը ցուցադրե և վեր կը հանե:

Հետո արտասանեցան երկու ոտանավորներ, որոնցմե առաջինը, որ արտասանեց օր. [տիկին] Ա. Տիգրանյան, թյուրքահայ բանաստեղծ Վ. Թեքեյանի գրչին կպատկաներ՝ «Կ'անձրևե, տղաս»: Հեղինակը, որ ներկա էր, արժանացավ բուռն ծափահարության, որուն պ. Թեքեյան պատասխանեց մի քանի խոսքով:

Գեղարվեստական բաժնին մեջ նվագվեցան քանի մը կտորներ պիանոյի վրա ջութակի ընկերակցությամբ:

Երեկույթի տպավորություն բավական լավ էր, բայց Երևանի ինտելիգենտ հասարակությունը շատ աչքի չէր ընկներ այնտեղ»[5]:

Հանրային կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանը խոսում է մեկուկես ժամից ավելի, խոսքի մեջ ընթերցում է Ե. Չարենցի գրքերից հատվածներ:

Նախագահել է Վահան Խորենին, ով «զգաստացնելու» սպառնալիքով դիտողություն է արել բանախոսին, երբ ծափահարությունների ներքո անցել է «Սոմա»-յի և «Ամբոխներ…»-ի վերլուծությանը[6]: Այսինքն՝ պետք չէ կոմունիստական հակումներ ունեցող Չարենցին այդքան մեծարել…

Հոկտեմբերի 16-ին Բաթում-Թիֆլիս ճանապարհով Փարիզից Երևան էր ժամանել Պողոս Նուբարի պատվիրակությունը, որի կազմում էր նաև Վահան Թեքեյանը, ով նույնպես մասնակցում էր երեկոյին: Վ. Թեքեյանը իջևանել էր «Օրիանտ» հյուրանոցում, Հայաստանում մնացել մինչև նոյեմբերի վերջը[7]: «Հայաստանի ձայն»-ը տպագրում է Գ. Մահարու «Այգեկութ» բանաստեղծությունը՝ «Բանաստեղծ բարեկամիս՝ Վահան Թեքեյանին» ուղերձով[8]:

Ե. Չարենցն այդ գրական միջոցառմանը ներկա չի եղել և այդ մասին տեղեկացել է մամուլից: Այդ կապակցությամբ 1922-ին «Չարենց-նամե»-ում գրում է.

Էլ ինչո՞ւ ծիծաղեր հոգիս,
Երբ Նիկոլ Աղբալյանը մի օր
Սարսելով դահլիճն ու ֆոյեն–
Ավետեց ամբողջ աշխարհին,

---

[5] «Հայաստանի ձայն», 30.10.1919, թիվ 9:

[6] Տե՛ս «Զահակիր», 1963, թիվ 12:

[7] Տե՛ս «Հայաստանի ձայն», 19.10.1919, թիվ 7:

[8] Տե՛ս «Հայաստանի ձայն», 19.10.1919, թիվ 7:

Որ ծնվել է մեծ մի պոետ…

Որ ծնվել է երգիչ մի վառ,

Ու բերել է երգեր հրե–

Ցնծա՛, Նաիրյան աշխարհ,–

Ցնծա՛… Եղիշե Չարենց[9]…

Ն. Աղբալյանի հիշողություններից պարզվում է, որ Ե. Չարենցի «Երեք երգ Տխրադալուկ Աղջկան» և «Դանթեական առասպել» գրքերին 1917-ին ծանոթացել է Բաքվի «Արև» թերթի խմբագրատանը: Նրան հրավիրել էին մի հավաքույթում բանախոսելու, բայց դեռ ժամանակ կար: Ժամանակն անցկացնելու համար ծանոթանում է պատուհանի գոգին լցված հայերեն, ռուսերեն գրքույկներին, որոնց մեջ էին նաև Ե. Չարենցի հրատարակությունները. «Վերնագրերը ուշագրավ էին: Տեսա մի նոր մարդ, նոր նյութ, նոր վերաբերում և վարժ տաղաչափություն: Մի տաղանդավոր սկսնակ: <…>: Տարվեցա ընթերցումով, մոռացա հավաքույթ և սպասում: Վ. Տերյանի հետքով մի նոր բանաստեղծ էր ծագում գրականության հորիզոնում: Որոշեցի առաջին իսկ առիթով գրեմ այս նոր հեղինակի մասին»[10]:

Որոշում է… բայց ժամանակները խառն էին: Մինչ պահը կհասներ, անցնում է երկու տարի: Դասախոսությունը կայացել է «…խուռն բազմության ներկայության: Նոր բանաստեղծի անունն ընկավ ամենքի բերանը <…>, և Չարենցը դարձավ մի անուն»[11]:

Ըստ Ստ. Զորյանի՝ դասախոսությունից մի քանի օր հետո Ե. Չարենցն արդեն Երևանում էր և ներկայանում է Ն. Աղբալյանին: Աշխատանքի նշանակվելուց հետո նրանց միջև տեղի է ունենում այսպիսի խոսակցություն.

«–Ի՞նչ պիտի անեմ,– հարցնում է Չարենցը…

– Կնստես և կգրես ինչ կարող ես:

– Ես գործի մասին եմ հարցնում, պ. Աղբալյան:

– Գործը կանեն անողները»:

Նույն պահի մեկ այլ հուշագրի մտաբերում.

«– Հը, եկե՞լ ես, Չարենց, լավ ես արել, <…> լսել եմ նյութական վիճակդ շատ փայլուն չէ, և դիմում ես կատարել ուսուցչական մի պաշտոնի համար… Չէի՞ր ուզենալ ինձ օգնել կրթական վերակառուցման գործում:

---

[9] **Չարենց** 1955, 424:

[10] «Չարենցի հետ: Հուշեր» 1997, 61–62:

[11] «Չարենցի հետ: Հուշեր» 1997, 61–62:

– Ինչպես թե, պարոն նախարար, ես որ բացարձակ բան չեմ հասկանում այդ գրասենյակային աշխատանքից...

– Եվ կարիք էլ չկա, որ հասկանաս, ես կտամ մի սեղան, կնստես առաջը ու կգրես բանաստեղծություններ, այդ քեզ համար ծանոթ աշխատանք է, չէ <...>, կստանաս մի ռոճիկ, որ քեզ ապրուստի հոգսից կազատի, իհարկե շատ համեստ, ինչ-որ ստանում է մի ուսուցիչ կամ մի նախարար <...>: Իսկ աշխատանքը, որ իրավունք ունեն քեզանից պահանջելու իբրև պաշտոնյա, այդ կթողնես ինձ, ես քո տեղը կկատարեմ <...>: Քո անելիքը շատ ավելի էական գործ կլինի հայ ժողովրդի համար»[12]:

Ի՞նչ էր անում Ե. Չարենցը նախարարությունում. Ն. Աղբալյանի տեղակալ Պողոս Սոտնիկյանը բողոքել է. «Դուք նրան երես եք տալիս, պարո՛ն Աղբալյան, ոչ մեկի չի ենթարկվում, ոչինչ չի անում, նախարարության իրացանկն էլ դեռ չի կազմել»[13]: Բարեհոգի ժպիտով Ն. Աղբալյանը պատասխանում է. «Դուք խելոք մարդ եք, պարո՛ն Սոտնիկյան, Չարենցը վաղը կարող է գրել մի բանաստեղծություն, որն ավելին կարժենա, քան նախարարությանդ ամբողջ փտած գույքը… Հանգիստ թողեք նրան»[14]:

Անդրադարձներ

Ե. Չարենցի այս օրերի կերպարը՝ ըստ Նշան Հովհաննիսյանի. «Հազիվ 18 տարեկան պատանիի մը տպավորությունը կ՚ըներ, վարանոտ նայվածքով, քիչ մը խոնարհ, որպես թե ամաչկոտ, բայց ամբարտավան ժպիտ մը շրթներուն վրա, որ ամեն զինք տեսնողը առաջին իսկ առիթով կը խրչտեցներ ու հեռու կը պահեր իր անձեն»[15]: Ներկա է եղել Ն. Աղբալյանի երկու ժամ տևած բանախոսությանը, ինչը համարում է Չարենցի «ռեկլամ»: Վերաբերմունքից երևում է, որ առանձնապես բարեհաճ չէ Չարենցի նկատմամբ, նաև թույլ է տալիս սխալներ՝ «Չարենցը, որ նախարարին տանը կ՚ապրեր…»[16]:

Նախարարությունում աշխատած ժամանակ Երևանում Ե. Չարենցն ապրել է Դերենիկ Դեմիրճյանին հատկացված արվեստի վարչության գրասենյակում, ապա՝ Նազարովսկայա փողոցում. կիսամութ մի փոքրիկ ներքնահարկ՝ մի մահճակալ, մի սեղան և երկու աթոռ:

[12] **Աղբալյան** 1952, 17:

[13] **Անանյան** 1987, 57 (ըստ Կարո Մելիք-Օհանջանյանի):

[14] **Անանյան** 1987, 57:

[15] «Ծիածան», 1939, թիվ 2, 22:

[16] «Ծիածան», 1939, թիվ 2, 22:

Ն. Աղբալյանի զեկուցումից հետո Ե. Չարենցն ուներ պատրաստի երկու ախոյան՝ հանձինս ՀՅԴ Երևանի կոմիտեի քարտուղար ու գրական ընկերության փոխնախագահ Վահան Խորենիի և հատկապես Ավետիս Ահարոնյանի որդու, հանրապետության դատախազ Վարդգես Ահարոնյանի, ով Արմենուհի Տիգրանյանի ամուսինն էր: Վարդգես Ահարոնյանի հետ լարվածությունն ավելանում ու խորանում է Ե. Չարենցի՝ Արմենուհի Տիգրանյանով հոգեխռով տարվածությամբ: Խորացել է նաև Խորենի - Չարենց թշնամանքը. խորհրդայնացումից հետո մի երեկույթի ժամանակ, որտեղ եղել է նաև Արփենիկը, արվեստի կոմիսար Ե. Չարենցը հանել է մաուզերը և կրակել պատին փակցված Վահան Խորենիի նկարին[17]:

Նշված երեկոյին Վ. Թեքեյանի ելույթից հետո Արմենուհի Տիգրանյանը արտասանել է իր բանաստեղծություններից մեկը:

Մամուլի արձագանքներից. «Դասախոսը շատ հիացմունքով խոսեցավ նոր բանաստեղծի մասին, դրվատեց անոր բանաստեղծական իսկական արժանիքն ու տաղանդը, նորագույն բանաստեղծների շարքի մեջ ամենաառաջնագույն տեղը տվավ անոր: Տերյանեն վերջ Չարենցն է, ըսավ, մեր իրականության մեջ ամենաուժեղ նոր և ինքնատիպ բանաստեղծը…»[18]: Այստեղ, որպես զեկուցման օր, նշվում է հոկտեմբերի 18-ը: Գառնիկ Անանյանն ամսաթիվ չի նշում, այլ միայն՝ «1919-ի հոկտեմբերին»[19]:

«19 թվին հանդես եկավ մի այլ քնարերգակ՝ Եղիշե Չարենց: Մեր ականավոր քննադատ Ն. Աղբալյան մի հմտալից վերլուծությամբ դասեց նրան հայ գրական ընտանիքի մեջ և այն էլ բավական պատվավոր տեղ, տալով միաժամանակ երիտասարդ բանաստեղծին մի լայն վկայական,- գրական նոր ու արթնացող տրամադրության կրողն ու երգիչը լինելու պատիվը…»[20]:

«Հիացմունքով լսեցինք Աղբալյանին. դասավորեց Չարենցի բանաստեղծությունները երեք մասի, խորունկ վերլուծում ըրավ, խոսեցավ մեկուկես ժամից ավելի…»[21]:

Ներկա է եղել նաև Գ. Մահարին[22], ով այս շրջանակի մեջ էր և օրեր անց մասնակցել է Վ. Թեքեյանի պատվին Նորքում կազմակերպված խնջույքին:

---

[17] Տե՛ս «Չարենցի հետ: Հուշեր» 1997, 216:

[18] «Ժողովուրդ», 22.10.1919, թիվ 116:

[19] **Անանյան** 2002, 69:

[20] «Յառաջ», 21.02.1920, թիվ 39:

[21] «Ջահակիր», 1963, թիվ 12:

[22] Տե՛ս «Հուշեր Եղիշե Չարենցի մասին», 1986, 116:

Ն. Աղբալյանի զեկուցմանը ներկա է եղել Կարինե Քոթանջյանը Շավարշ Բասենցյանի հետ, ով, ըստ Կ. Քոթանջյանի, հոր հոգեորդին էր, այլ կերպ՝ իր խորթ եղբայրը: Զեկուցողն ասում է, որ չգիտի՝ գրողը ո՞ղջ է թե մեռած և ենթադրում է, որ պետք է լինի 40 տարեկան: Զեկուցումից հետո ելույթ է ունենում Կ. Քոթանջյանը, ասում բանաստեղծի տարիքը և աշխատավայրը: Հաջորդ օրն էլ հեռագրում է Ե. Չարենցին և կանչում Երևան: Ըստ նրա՝ մի քանի օրից Չարենցը Երևանում էր, բայց բանաստեղծը Երևանում էր 1920-ի հունվարի 26-ին:

Կ. Քոթանջյանը նաև ավելացնում է. «Հոնորար կորզելու համար Աբովը Չարենցին առանց ամոթի Բաշքյադիկլարում պահեց մինչև գարուն, երբ գիտեր, որ Աղբալյանի դասախոսությունից հետո ես նրան հեռագրով կանչել եմ»[23]:

Ստ. Զորյան. «Դրանով արդեն Չարենցը հռչակվեց մի օրում: Մինչ այդ, եթե շատ սակավ մարդիկ գիտեին Չարենցին, որպես բանաստեղծի, և այն էլ մեծ վերապահությամբ, այդ բանախոսությունից հետո արդեն ամենքն իմացան և համոզվեցին, որ հանձին Չարենցի մենք ունենք մի նոր իսկական բանաստեղծ... Նրա բանաստեղծությունների գրքույկներից հազիվ մի քանի օրինակներ կային Երևանում, և դրանք խլում էին իրար ձեռքից: Այս էլ պետք է ասեմ, որ Աղբալյանը Չարենցին *նոր բանաստեղծ* համարելով՝ առանձնապես շեշտեց այն, որ նա հնչեցնում է նոր մոտիվներ, բերում է նոր հույզեր և նոր մոտեցում երևույթներին...<...>: Իսկ ինքը՝ բանաստեղծը, չկար մեջտեղ. նա Երևանում չէր. մինչդեռ ամենքն ուզում էին տեսնել, թե ո՞վ է այդ երիտասարդը, այդ խանդով, ավյունով ու թափով պոեմների հեղինակը»[24]:

Այդ օրերին Ե. Չարենցի մասին դրվատական խոսքեր է ասել նաև Լևոն Շանթը:

Չարենցը ՀՀ նախարարությունում

Ամիսների ուշացումով, քանի որ ուսուցչություն էր անում Կարսի Բաշքյադիկլար գյուղում և կտրված էր մայրաքաղաքում կատարվող անցուդարձից, 1920 թ. հունվարի 26-ին Ե. Չարենցը գալիս է Երևան, ներկայանում Նիկոլ Աղբալյանին և նշանակվում Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարության հատուկ հանձնարարությունների կոմիսար[25]: Հրամանը տրվել է հունվարի 1-ով՝ հետին թվով, որպեսզի բանաս-

---

[23] «Չարենցի հետ: Հուշեր», 1997, 44:

[24] **Զորյան** 1985, 311–312: «Հուշեր Եղիշե Չարենցի մասին», 1986, 68–69:

[25] Տե՛ս **Չարենց** 1959, 273:

տեղծը կարողանա օգտվել ամսվա ընթացքում աշխատակիցներին տրվող սննդի չափաբաժնից:

Ըստ Ն. Աղբալյանի «Եղիշե Չարենցն ու ես» հուշի, «Մտավ աղքատիկ հագուստով մի նիհար երիտասարդ, անխնամ մազերով, մի գլուխ վտիտ ուսերին, դեմքի մորթը դժգույն ու քաշված և քիթը մեծ ու սուր: <...>: Լրագրի մեջ կարդալով դասախոսության մասին, թողած է պաշտոնատեղին և եկած է Երևան: Ասացի, որ նախարարությանս նախահաշվի մեջ նշանակված է մի պաշտոն. «անձնական քարտուղար»: Այդ պաշտոնի համար մարդ չեմ հրավիրած. ես ինքս եմ իմ քարտուղարը, մարդու կարիք չունիմ: Բայց հիմա ես ձեզ նշանակում եմ այդ պաշտոնին: Շենքիս մեջ ունեմ մի ազատ սենյակ. կարող եք այնտեղ ապրել: Բայց ձեր «պաշտոնն» արդարացնելու համար պետք է մի բան անեք. կազմեք նախարարությանս շենքի իրացանկը: Դուք ազատ եք, երբ ուզեք՝ եկեք պաշտոնի»[26]

Նշանակման հրամանը ստորագրել է Ն. Աղբալյանը: Նրա նպատակն էր՝ «հնար տալ ապրելու և իր կոչումին հետևելու»: Աշխատավայրը գտնվել է Նալբանդյան 58 հասցեում:

Հունվարի 1-ից չէր կարող լինել Երևանում, քանի որ «Օրհորդ Աշխենին» բանաստեղծությունը գրել է հունվարի 15-ին՝ Կարսում, և նույն օրն էլ նույն տեղում նրան է նվիրել նշված գրքերը:

Ըստ Ալ. Զաքարյանի՝ Կարսից արդեն անվերադարձ դուրս է եկել 1920 թ. հունվարի 23–25-ի միջակայքում, «Երևան է հասել հունվարի 25–26-ին, կեսօրից առաջ»[27]: Ըստ Գառնիկ Անանյանի՝ Չարենցը պաշտոնի է նշանակվել հունվարի 26-ին[28]: Ավելացնենք, որ նախապես Գ. Անանյանը սխալվել էր. «1919-ի դեկտեմբերին Ե. Չարենցը գալիս է Երևան»[29]:

Շարունակելով կրթալուսավորչական գործունեությունը՝ Ն. Աղբալյանը 1920 թ. հունիսի 6-ին Խորհրդարանի դահլիճում հանդես է գալիս «Հայ գրականության ապագայի մասին» զեկուցմամբ: Հայ գրականության գալիք օրվա մտահոգությունը օրախնդիր հարց էր, որ, Վ. Տերյանից ու Ն. Աղբալյանից բացի, Եղեռնից առաջ «Վաղվան գրականություն» կարգախոսով արծարծում էին նաև արևմտահայ գրողները:

---

[26] **Աղբալյան** 1997, 330:

[27] **Զաքարյան** 1997, 573, 585:

[28] **Անանյան** 1980, 59:

[29] **Անանյան** 1979, 148:

1920 թ. հունիսին Երևանում լույս է տեսնում Չարենցի «Բոլորին, բոլորին, բոլորին (Երեք ռադիոպոեմ)» գիրքը (14 էջ), որտեղ զետեղված են «Նայիրի երկրից», «Դեպի ապագան», «Բրոնզե թևերը կարմիր գալիքի» ռադիոպոեմները (թվագրել է 1920, մարտ-հունիս):

Հոկտեմբերյան հեղափոխության լուրը Սմոլնիից աշխարհում տարածվեց հենց այդ կոչով. «Всем! Всем! Всем!»:

Ըստ Գ. Մահարու՝ գիրքը պայթեց ռումբի պես և թողեց անմոռանալի տպավորություն[30]: Պոեմները Ա. Խանջյանն արտագրում է ծոցատետրի մեջ: Ե. Չարենցը կերտում է իր պատմական կերպարը և այդուհետև դառնում իր օրերի պատմիչ.

Ե՛ս – ե՛ս եմ նորից.–
Դարերից եկած անհո՛ւն մի պոետ–
Եղիշե Չարենց–
Նայիրի երկիր, քո երգիչը վառ,
Օրհներգուն պայծառ
Ու զավակը մեծ…
Ե՛ս – ե՛ս եմ նորից.–
Ոսկի երակը հրնամյա ցեղիս,
Իմ ջլաբազուկ հաղթ ժողովրդի
Օղակը վերջին[31]:

Թեև 1920 թ. հունիսի 1-ին Ե. Չարենցը «Խնդիր»-ով դիմում էր հանրային կրթության և արվեստի «մինիստրին»՝ ազատվելու հատուկ հանձնարարության կոմիսարի պաշտոնից, բայց գրքի տպագրությունը կազմակերպում է Նիկոլ Աղբալյանը:

Ազատման դիմումի պատճառը քաղաքական անվստահությունն էր, որովհետև, որպես կոմունիստ, մասնակցել էր մայիսյան ցույցին, անգամ ենթարկվել հետապնդումների: Ազատման հրամանը հունիսի 4-ին (թիվ 126) ստորագրել է մայիսի 16-ից Ն. Աղբալյանին փոխարինած նախարար Գևորգ Ղազարյանը: Ըստ այդմ՝ հունիսի 1-ից, «...համաձայն իր խնդրի»[32], Ե. Չարենցն ազատվում է պաշտոնից: Ն. Աղբալյանն այդ ժամանակ գործուղվել էր Կարս՝ մայիսյան հուզումների կապակցությամբ ժողովրդին հանգստացնելու համար: Իսկ Կարսը Ն. Աղբալյանի համար հերթական քաղաք չէր. նա եղել

---

[30] **Մահարի** 1967, 401:

[31] **Չարենց** 1963, 98–99:

[32] **Գասպարյան** 2022, 97:

էր 1917-ին Թիֆլիսում հիմնադրված «Ռազմիկ» շաբաթաթերթի խմբագիրը, որի վերջին համարները 1918-ին լույս տեսան Կարսում:

1920 թ. փետրվարի 3-ին Ե. Չարենցը վերցրել է մի «Վկայական», ըստ որի՝ հունվարի 1-ից վարում է հատուկ հանձնարարությունների կոմիսարի պաշտոնը[33]:

Մինչև խորհրդայնացում, ըստ «Համառոտ կենսագրության», Երևանում Ե. Չարենցն աշխատել է որպես մանկատների ուսուցիչ: Ըստ 1923 թ. օգոստոսի 11-ի հարցաթերթիկի՝ «1919 / VII – 1920 / XII, 1 տարի 5 ամիս» նա որպես ուսուցիչ, աշխատել է Երևանի Ամերկոմի ուսումնարանում[34]:

Նախարարությունից հետո

Նախարարությունից ազատվելուց հետո Օհան Կարոյի միջնորդությամբ երկրորդ որբանոցում Ե. Չարենցին աշխատանքի է տեղավորել Նշան Հովհաննիսյանը, ով հետագայում հանդես է եկել «Եղիշե Չարենց: Անձնական հանդիպումներ» հուշագրությամբ. «Չարենցն ալ «դաստիարակ» եղավ Վեքելեվսկայա փողոցի որբանոցին մեջ, ուր էր նաև մեր բնակարանը»[35]: Մինչ այդ նա աշխատել է նաև 13-րդ որբանոցում, որտեղից ազատվել է հունիսի 1-ին:

Դաստիարակ լինելու հետ մեկտեղ, Ե. Չարենցը մայրենիի և աշխարհագրության ուսուցիչ էր Երևանի ամերիկյան երրորդ մանկատան դպրոցում: Որբերի տրամադրությունը փոքր-ինչ բարձրացնելու համար դասամիջոցներին բակում նրանց հետ շուրջպար է բռնել:

Հերթական աշխատավարձն ստանալուց հետո իր գրվածքներով հետաքրքրված մանկատան սաներին՝ Հենրի Գաբրիելյան, Գևորգ Պարիս (Պարոնիկյան), Հովհաննես Կանտոյան, հրավիրում է «Ֆրանսիա» պանդոկ՝ ընթրիքի:

Այս մանկատանն էին նաև Խորեն Աճեմյանը (Ռադիո), Ադո Ադոյանը: Ե. Չարենցը նրանց հետ անցկացնում է գրական պարապմունքներ. քննարկում է Հակոբ Հակոբյանի, Գառնիկ Քալաշյանի գործերը: «Իր ստեղծագործությունները Չարենցը մեզ չէր կարդում՝ հավանաբար զգուշանալով բոլշևիկյան քա-

---

[33] **Չարենց** 2017, 436:

[34] **Չարենց** 2017, 287:

[35] «Ծիածան», 1939, թիվ 2, 22:

րոզչության մեղադրանքից…»[36]: Պատերազմի ժամանակ որբերին տարել են «ցեյխհաուզներ՝ ռազմաճակատի համար փամփուշտներ մաքրելու»[37]:

Արշալույս Ջանիկյան. «Ես բախտ եմ ունեցել Չարենցի հետ ուսուցիչ լինելու, նրա հետ ապրելու 1920 թվականի խառնաշփոթ, ողբերգական օրերը:

Դպրոցը՝ կազմակերպված Երևանի հիվանդ երեխաների ամերիկյան մանկատանը կից, բաղկացած էր երեք դասարանից, հետևյալ ուսուցչական կազմով. երրորդ դասարանի դաստիարակ-ուսուցիչ Եղիշե Չարենց, երկրորդ դասարանի ուսուցչուհի Արփիկ Աստվածատրյան (հետագայում՝ Չարենց), առաջին դասարանում՝ ես:

Բանաստեղծ Չարենցը դարձել էր ուսուցիչ և որբանոցի կիսաքաղց երեխաներին հայոց լեզու, թվաբանություն էր սովորեցնում՝ սնվելով մանկատան խղճուկ սնունդով, և միշտ համոզված, որ դա ժամանակավոր երևույթ է:

Որբանոցի կառավարչուհին՝ Լուսնթագ Խանիկյանը, գնահատելով Ե. Չարենցի արժանիքները, հնարավորություն էր ստեղծել, որ նա կարողանա նաև ստեղծագործել, գրել. «Որբանոցում նրա համար առանձնացրել էր մի փոքր սենյակ»: Այլևայլ գործերի հետ մեկտեղ այդ սենյակում է ծնունդ առել «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» տաղը: Արփիկը, Արշալույսը, Լուսնթագը եղել են բանաստեղծի նոր գործերի առաջին ունկնդիրները: Նրանց համար ձեռքերի թափահարումներով, օրորումներով արտասանել է նաև Տերյան. «Հետո մռայլվում էր, նյարդայնանում, ուզում էր մի բան ջարդել: Մի անգամ, հիշում եմ, ձեռքից գցեց բաժակը, կոտրեց, հետո զղջաց, խաղաղվեց, ժպտաց մանկան անմեղությամբ (Խորեն Ռադիո, «Չարենցը որպես բանաստեղծ և անհատականություն»[38]:

Ըստ Ա. Ջանիկյանի՝ Ե. Չարենցը պատմել է Կարսի կյանքից, հիշել բերդը, գետը…

Եկավ կարմիր սահմանաբաժանի օրը: Ն. Աղբալյանը մնաց: 1921-ին բռնկվեց Փետրվարյան ապստամբությունը: Փետրվարի 9-ին Ն. Աղբալյանին ձերբակալեցին. «Ավագ որդու պատմելով՝ ձերբակալողների հետ է եղել նաև… Չարենցը: - Եկել էր, որ հայրիկին չնեղացնեն,- որդիների եզրակացությունն է սա»[39]: Ազատվում է փետրվարի 18-ին: Ուղարկում են Էջմիածին[40]:

---

[36] **Գասպարյան** 2023, 316:
[37] **Գասպարյան** 2023, 31:
[38] «Հուշեր Եղիշե Չարենցի մասին», 1986, 112:
[39] **Անանյան** 2002, 76:
[40] Տե՛ս **Աղբալյան** 1968, 344:

Մնում է Գյուտ եպիսկոպոսի հետ նույն խցում, կարդում էին Նարեկ և Նարեկի՝ Ավետիքյանի ու Նալյանի մեկնությունները: Վերադառնում է ապրիլի մեկին. «...բայց նույն գիշերն իսկ հորդ անձրևի տակ ընդմիշտ թողին մեր աշխարհը»[41]: Ըստ որդիներից Ռուբենի՝ գալիս է Դրոն և ընկերոջն ասում. «Վեր կացեք, քաղաքը թողնում ենք»[42]: Լ. Շանթի հետ մեկտեղ հեռանում են երկրից...

Հեռացող ճանապարհներ

Կարմիր սահմանագծից հետո, երբ երկրի իսկական տերերը, մի կերպ հեռանալով իրենց ստեղծած երկրից, դարձել էին աստանդական, Ե. Չարենցը մտաբերում է Թավրիզում ապաստանած Նիկոլ Աղբալյանին և 1923 թ. հունվարի 28-ին նրան ուղարկում երկհատորյակը և նոր լույս տեսած գրքերը: Նախ, նրան զգուշացնում է չհավատալ Վարդգես Ահարոնյանի և այլոց հերյուրանքներին, թե, իբր ինքը, նագանը գոտիկից կախ, Երևանով մեկ առաջինն Ն. Աղբալյանին էր որոնում, որ գնդակահարի:

Ընծայագրությունները ջերմ են և մարդկային՝ I հատոր. «Սիրելի Նիկոլ Աղբալյան, ընդունիր իմ գրքերը որպես հարգանքի և համակրանքի նշան, 28. I. 923, Երևան», II հատոր. «Նիկոլ ջան, ես ոչ մի համար չունեի իմ այս հատորներից, որովհետև առիթ հանդիսացավ Մ-ը՝ զիջեց իր համարները. Ընդունիր իմ այս նվերը որպես նշան հարգանքի և համակրանքի. Քո՝ Եղիշե Չարենց, 923, I., 28. Երևան»[43]:

Հաջորդ գրքերից մեկը «Ռոմանս անսեր»-ն է՝ «Սիրելի Նիկոլ Աղբալյանին, իմ առաջին ուսուցչին, որին ես երբեք չեմ մոռանա և չեմ դադարի հարգել», մյուսը՝ «Պոեզոզունա»-ն՝ «Սիրելի Նիկոլ Աղբալյանին՝ շատ սիրով և հարգանքով. Եղիշե Չարենց»[44]:

Ի պատասխան Ե. Չարենցի ուղարկած գրքերի՝ Ն. Աղբալյանը 1923 թ. փետրվարի 9-ին մի զայրալից նամակ է հասցեագրում նրան. «Ստացա գրքերդ: Կարդացի: Շնորհակալություն քեզ ու զիջողին»: Այնուհետև անցնում է սուր քննադատության, անգամ՝ երգիծանքի ու ծաղրուծանակի՝ հատկապես նկատի ունենալով վերջին երկու գրքերը. «Երբ ձեռքս առա «Ռոմանս անսեր»-ը, որ անպատկառ բովանդակություն ուներ և ոգու անկում էր

[41] **Աղբալյան** 1968, 346:

[42] **Անանյան** 2002, 77:

[43] «Չարենցի հետ: Հուշեր», 1997, 64:

[44] «Չարենցի հետ: Հուշեր», 1997, 64:

ցուցադրում՝ զայրույթս պահել չկարողացա: Իր իսկ անպատկառ ոճով մի նամակ գրեցի և իր նորօրինակ տաղաչափությամբ մի «Պոեզոկարծիք» շարադրեցի [գրքերը բերողի հետ այդ կարծիքներն ուղարկել է Չարենցին]:

Աղքատացումը հոգու, որ դու հանդես ես բերում անպատկառ և կարծում ես թե դրոշ պարզեցիր նոր ու վառ՝ շատ է հին: <...> Շնորհքն իջել է վրադ առանց որ դու պահանջես: Ազնվական ես ծնվել.– պարտքդ ուրեմն իմացիր: <...>: Հարկ չկա, որ քո վերնատուր շնորհքն առնես ու քաշ տաս տիղմերի մեջ... <...>: Վա՜յ քեզ Չարենց, հազար վայ. Ափսո՜ս հայ գրականություն, ավելի ափսոս իմ հույսեր, որ առկայծում են սակայն: Ողջույն գրական՝ Ն. Աղբալյան»[45]:

Հետգրությամբ՝ «Զքոյսդ ի քոյոց քեզ մատուցանեմ» անդրադարձով, Ե. Չարենցի «Ռոմանս անսեր»-ի ոճով գրում է նրան հեզնող «Պոեզոկարծիք» և ապա շարունակում. «Լսեցի, որ նամակս ու կարծիքս տեղ են հասել: Ասում էին, որ գոհ չէր մնացել և գրածներս համարել էր «անպատկառ»»: Ե. Չարենցի «Էպիքական լուսաբաց» ժողովածուն և հետագա գրական հաջողությունները նկատի ունենալով, և վստահ, որ իր նամակն էլ այդ վերափոխման գործում իր դերն է ունեցել, խոսքն ավարտում է գնահատությամբ. «Չարենցը շտկեց իր բարքն ու ստեղծագործությունը»[46]:

Ըստ Ն. Աղբալյանի՝ Ե. Չարենցի «Էպիքական լուսաբաց» գրքում զետեղված «Սիրելի Ա-ին» բանաստեղծությունը, գրված 1929 թ. նոյեմբերի 27-ին, նվիրված է իրեն. «...բանաստեղծությունն ի՛նձ է ուղղված»[47]:

Ես չե՛մ մոռացել քեզ, բարեկա՛մ,
Եվ հիշում եմ քեզ կրկի՛ն, կրկի՛ն,
Ինչպես անցորդը թափառական
Հիշում է միշտ իր անցած ուղին:-
Սիրով է հիշում նա ուղին հին,
Գուցե թախիծով, սակայն երբեք
Նա չի՛ ցանկանա կրկի՛ն, կրկի՛ն
Թողնել հեռուներն ու դառնալ ետ...
Երբ անցած ուղին հուշով անշեջ
Խոցում է, ինչպես կարոտի նետ,-
Խեղդո՛ւմ է նա այդ կարոտն իր մեջ,

---

[45] «Չարենցի հետ: Հուշեր», 1997, 63:
[46] «Չարենցի հետ: Հուշեր», 1997, 63–67:
[47] «Չարենցի հետ: Հուշեր», 1997, 73:

Որ երբե՛ք, երբե՛ք չդառնա ետ[48]:

Եզրակացություններ

Կան նշանավոր անհատների ճակատագրական հանդիպումներ, որոնք դառնում են պատմական փաստ: Այդպիսին է իր բանաստեղծական ճանապարհի վերելքին գտնվող 22-ամյա Եղիշե Չարենցի և Առաջին Հանրապետության տարիներին Լուսավորության և արվեստի նախարար, հեղինակավոր գրական քննադատ 44-ամյա Նիկոլ Աղբալյանի հանդիպումը, որը տեղի ունեցավ հեռակա կարգով 1919-ի հոկտեմբերին, առկա՝ 1920-ի հունվարի վերջին:

Ն. Աղբալյանը հիացած էր Ե. Չարենցի բանաստեղծություններով ու պոեմներով, ձեռք էր բերել նրա գրքերը և կարդացել: Ե. Չարենցի ստեղծագործությանն անդրադառնալու հարցը քննարկել էր Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահ Հովհաննես Թումանյանի հետ և, առանց Ե. Չարենցին անձնապես ճանաչելու, նրան նվիրել իր ղեկավարած Հայ գրողների ընկերության 1919 թվականի հոկտեմբերի 16-ի հերթական նիստը: Ն. Աղբալյանը խոսել է մեկ ժամ ու կեսից ավելի և հռչակել Ե. Չարենցին: Նրա զեկուցման առանձին մտքեր պահպանվել են թե՛ մամուլի էջերում և թե՛ հուշագիրների անդրադարձներում: Տպավորությունը ցնցող էր. իսկ այդ զեկուցումից հետո բոլորը որոնում էին Չարենցի գրքերը:

Ե. Չարենցը զեկուցմանը ներկա չէր. 1919-ի աշնանը նա ուսուցչություն էր անում Կարսի մարզի Բաշքյադիկլար գյուղում: Ն. Աղբալյանի զեկուցման մասին տեղեկացել է մամուլից և նրան է ներկայացել ավելի քան երեք ամիս անց՝ 1920 թ. հունվարի 26-ին և մի համեստ պաշտոն ստացել նրա ղեկավարած նախարարությունում: Ն. Աղբալյանն ըստ ամենայնի մտահոգվել է, որպեսզի այդ դժվար ու ծանր օրերին Ե. Չարենցը գոնե նվազագույն չափով նյութապես ապահովվի և կարողանա ստեղծագործել:

1920 թվականի մայիսյան դեպքերից հետո, երբ Երևանում, Գյումրիում, Կարսում փողոց էին դուրս եկել կոմունիստները, նրանց ճանապարհները բաժանվում են, որովհետև Ն. Աղբալյանը հավատավոր դաշնակցական էր, իսկ Ե. Չարենցը այդ տարիներին՝ խանդավառ կոմունիստ: 1920 թ. հունիսի 1-ին իր դիմումի համաձայն Ե. Չարենցն ազատվում է նախարարությունում զբաղեցրած պաշտոնից և, գլուխը պահելու համար, մանկատներում ուսուցչություն անում:

---

[48] **Չարենց** 1968, 115:

Հետագայում Ն. Աղբալյանի և Ե. Չարենցի ինչպես քաղաքական, այնպես և գրական ճանապարհները թեև հեռանում են, բայց պահպանվում է մեկը մյուսի հանդեպ ունեցած հետաքրքրությունը: Ե. Չարենցը Պարսկաստանում ապաստանած Ն. Աղբալյանին է նվիրում իր գրքերը, Ն. Աղբալյանը քննադատում է Երեքի դեկլարացիայի շրջանի նրա ստեղծագործությունները, բայց մնում է նախկին գնահատանքի հիշողությունը և վաղվա հույսը, ինչն էլ հետագայում հեռակա կարգով վերստին մերձեցնում է նրանց:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աղբալեան Ն. 1965, Ամբողջական երկեր, հ. III, Պէյրութ, «Համազգային» հայ մշակ. ընկ., 440 էջ:

Աղբալեան Ն. 1959, Գրական-քննադատական երկեր, հ. I, Պէյրութ, տպ. Լս-ֆոտո-Բէս,456 էջ:

Աղբալեան Ն. 1952,Դասախոսութիւններ հայ մատենագրութեան մասին, Պէյրութ, 320 էջ:

Անանյան Գ. 1979, Եղիշե Չարենցը և ռուս գրականությունը, Երևանի համալսարանի հրատարակչություն, 344 էջ:

Անանյան Գ. 2002, Նիկոլ Աղբալյան, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 312 էջ:

Անանյան Գ. 1987, Եղիշե Չարենց, Երևան, «Սովետական գրող», 388 էջ:

Անանյան Գ. 1980, Չարենցի հետ, Երևան, «Լույս», 156 էջ:

Գասպարյան Դ. 2022, Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը, Երևան, «Տիգրան Մեծ», 804 էջ + 16 էջ ներդիր:

Գասպարյան Դ. 2023, Չարենց, Երևան, «Տիգրան Մեծ», 404 էջ:

Զաքարյան Ա. 1987, Եղիշե Չարենց: Կյանքը, գործը, ժամանակը, հ. I, ԳԱԱ հրատարակչություն, 968 էջ:

Զորյան Ս. 1985, Երկերի ժողովածու, Երևան, «Սովետական գրող» հ. XI, 640 էջ;

Թումանյան Ն. 1987, «Հուշեր և զրույցներ», Երևան, «Սովետական գրող», 320 էջ:

«Ժողովուրդ», 22.10.1919, թիվ 116:

«Լևոն Շանթ: Մարդը և գործը», 2019, Երևան, «Տիգրան Մեծ», 292 էջ:

Ն. Յ. (Նշան Յովհաննիսեան), Եղիշե Չարենց. Անձնական հանդիպումներ: «Ծիածան», 1939, թիվ 2, Պէյրութ:

«Հայաստանի կոոպերացիա», Երևան, 15.10.1919, թիվ 16:

Հ. Ս., Հայաստանի Գրական ընկերության Բ. երեկոն, «Հայաստանի ձայն», Երևան, 30.10.1919, թիվ 9:

Հայաստանի Գրական ընկերության Գ. երեկոն, «Հայաստանի ձայն», 19.10.1919, թիվ 7:

«Հուշեր Եղիշե Չարենցի մասին», 1986, Երևան, Հայպետհրատ, 394 էջ:

Մահարի Գ. 1967, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, «Հայաստան», 412 էջ:

«Յառաջ», Երևան, 21.02.1920, թիվ 39:

Չարենց Ե. 1955, Ամբողջական գործը, Պէյրութ, հ. Ա, «Սեւան» տպ., 432 էջ:
Չարենց Ե. 1963, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, ԳԱ հրատարակչություն, 400 էջ:
Չարենց Ե. 1968, Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, ԳԱ հրատարակչություն, 626 էջ:
«Չարենցի հետ: Հուշեր», 1997, Երևան, «Նաիրի», 424 էջ:
Չարենց Ե. 2017, Գիրք մնացորդաց, Երևան, «Տիգրան Մեծ», 486 էջ:
«Ջահակիր», 1963, Պէյրութ թիվ 12:

ЕГИШЕ ЧАРЕНЦ – НИКОЛ АГБАЛЯН

ГАСПАРЯН Д.

Резюме

Ключевые слова: Егише Чаренц, Никол Агбалян, Республика Армения, парламент, литературный клуб «Пандок», литературное общество Армении, «Радиопоэма».

28 мая 1918 года была провозглашена Республика Армения. В новосозданном правительстве известный литературный критик Никол Агбалян курировал сферу искусства и образования. Им были созданы Литературное общество Армении и литературный клуб «Пандок».

Н. Агбалян принимал активное участие в литературной жизни республики. 16 октября 1919 г. Литературное общество было приглашено в парламент. По данным периодики, в своем выступлении Агбалян представил Чаренца и его творчество.

После этого вечера имя Чаренца стало востребованным.

Сам Чаренц не присутствовал в зале, о выступлении Агбаляна он узнал из прессы, а спустя три месяца он приехал в Ереван и встретился с Агбаляном, предложившим ему скромную должность в министерстве. Это было сложное время. Н. Агбалян дал Чаренцу возможность жить и творить.

За этот период Е. Чаренцем было создано много произведений, в частности, «Радиопоэма», изданная в 1920 г. при поддержке Н. Агбаляна.

Чаренц проработал в министерстве до 1 июня 1920 года. Поэт присоединился к коммунистическим силам, вместе с которыми приветствовал советизацию Армении и стал комиссаром искусств.

После падения Республики Армения Н. Агбалян покинул Армению, но поэт и критик продолжали сотрудничать.

Литературные связи этих двух знаковых представителей армянской литературы являются памятным фактом в истории армянской литературы.

YEGHISHE CHARENTS – NIKOL AGHBALYAN

GASPARYAN D.

Summary

Keywords: Yeghishe Charents, Nikol Aghbalyan, Republic of Armenia, parliament, Literary Club “Pandok”, Literary Society of Armenia, “Radiopoem”.

Renowned Armenian literary critic Nikol Aghbalyan noticed the literary success of emerging genius Yeghishe Charents from the very beginning of his literary career and intended to dedicate a public lecture to him. He discussed this matter with Hovhannes Tumanyan as early as 1917 and received his support. On May 28, 1918, the Republic of Armenia was proclaimed, and Nikol Aghbalyan was one of its fighters. In the newly established government, he headed the sphere of arts and education and engaged in vigorous activities: he created the Society of Armenian Writers, founded the activities of the literary faction “Pandok”. In 1919, on October 16, the Literary Society was invited to an evening in the Parliament hall. According to the press, Aghbalyan spoke for about an hour and a half and, apparently, presented Charents, a new poet, from both thematic and poetic perspectives. The evening turned out to be very warm. Various literary authorities spoke at the event. After that evening, Charents’ name became in demand. Charents himself was not present that evening, as he was busy teaching in the village of Bashkyadiklar of Kars province. He learned about Aghbalyan’s speech from the press, and more than three months later, he came to Yerevan and introduced himself to Aghbalyan. Aghbalyan warmly welcomed him and offered him a modest position in the ministry. Those were difficult times. Aghbalyan gave Charents the opportunity to live and create. During this time, Charents wrote many of his best works, among which “Radiopoem” was published as a separate book in 1920 with the support of Aghbalyan. Charents worked in the ministry until June 1, 1920. Before that, he joined the communist forces, welcomed the

Sovietization of Armenia together with them, and became the commissar of arts. After the fall of the Republic of Armenia, Aghbalyan somehow left Armenia with other writers. After that, although Charents and Aghbalyan held different positions, they continued to collaborate. Charents sent him his new books, and Aghbalyan read and reviewed the demands of post-classical art. The literary connections of these great figures are a memorable fact in the history of Armenian literature.

ГОАР КАРАГЕЗЯН *
Кандидат филологических наук
Институт литератупы им. М. Абегяна НАН РА
gkaragyozian@gmail.com
ORCID: 0000-0001-9380-9244
DOI: 10.54503/1829-4073-2024.1.150–162

АРМЯНСКИЙ СЛЕД ЗАПАДНОЕВРОПЕЙСКОЙ ЛЕГЕНДЫ О ЯСТРЕБИНОМ ЗАМКЕ И ПРОКЛЯТОМ АРМЯНСКОМ ЦАРЕ

КЛЮЧЕВЫЕ СЛОВА
ястребиный замок
претекст
Иоганн Шильтбергер
Жан из Арраса
Кулдретт
Джон Мандевиль
Вильбранд Ольденбургский

АННОТАЦИЯ

Сюжет о ястребином замке, расположенном в Великой Армении, волшебнице и проклятом армянском царе был широко представлен в европейской литературе. Этот сюжет впервые использовал английский путешественник Джон Мандевиль в своем «Путешествии по морю и по суше» (около 1356 г.).. Мандевилевский текст интересующей нас легенды стал источником для «Путешествия по Европе, Азии и Африке с 1396 года по 1427 год» баварского путешественника Иоганна Шильтбергера. Заимствовав у Джона Мандевиля историю об армянском царе и ястребином (соколином) замке и сохранив основные элементы сюжета (описание ястребиного замка, условия владетельницы замка, проклятие), Иоганн Шильтбергер присовокупляет к рассказу своего предшественника записи, построенные на основе увиденного воочию.

Рассказ о ястребином замке и армянском царе, проклятом владетельницей замка из-за его неблагоразумного поведения, становится одной из ведущих сюжетных линий французского рыцарского романа «Мелюзина» (1387 г.), которой Жан из Арраса заключает свое повествование о фее Мелюзине, покровительнице царского рода Лузиньянов, а также французского стихотворного романа «Книга о Лузиньянах или Мелюзина» Кулдретта (конец XIV в.), посвященного

* *Հոդվածը ներկայացվել է 20.12.23, գրախոսվել է 26.01.24, ընդունվել է տպագրության 30.04.24:*

истории дома Лузиньянов.
В статье ставится задача уточнить реальный локус, в котором размещается замок-крепость и совершается действие, а также рассмотреть претекст легенды, использованный Мандевилем в его «Путешествии», который в свою очередь стал основой для сочинений Иоганна Шильтбергера, а также Жана из Арраса и Кулдретта.

Введение

29 сентября 1322 года английский путешественник Джон Мандевиль отправился в большое кругосветное путешествие, посетил много дальних стран: Армению, Турцию, Сирию, Египет, Аравию, Индию, Месопотамию, Персию, Халдею, Грецию, Татарию. Свои путевые заметки – впечатления о восточных странах, чудесные истории и связанные с ним различные приключения он записывал на французском и латинском языках, а затем, чтобы книга эта была доступна, по словам автора, и «людям его нации», переложил ее с французского на английский. При написании своего «Путешествия по морю и по суше» Джон Мандевиль широко использовал различного рода сведения из записок предшествующих путешественников, посетивших Восток. Марко Поло и Гийом Рубрук, Симон де Сен-Квентин, Плано Карпини и Одорико Парденоне, Хетум Корикосский и Вильгельм Больдензейле – таков далеко не полный перечень авторов, из трудов которых Джон Мандевиль заимствовал богатый материал о различных странах и городах, о народах, об их быте, нравах и обычаях, верованиях, легендах и преданиях, выдавая все это в качестве увиденного и услышанного им самим. Как показали исследователи в результате длительных и скрупулезных сопоставлений «Путешествия по морю и по суше» Джона Мандевиля и трудов известных путешественников, Мандевиль довольно свободно обращается с историческим и географическим материалом, смело заимствуя его у своих предшественников. Мандевиль является не участником путешествия, каковым он себя выдает, а в первую очередь рассказчиком. Путешествие, маршрут являются каркасом книги, несут основную композиционную нагрузку, однако этот каркас Мандевиль наполняет различными развлекательными историями, искусно вводя их в ткань своего повествования. Это развлекательное начало и есть главное

достоинство мандевилевского «Путешествия...», именно оно и обеспечило в свое время его шумный успех и популярность.

В данной статье речь пойдет об армянском пути мандевилевского путешествия, в частности, о поведанной путешественником истории, связанной с расположенным в Великой Армении ястребиным замком и армянским царем, который из-за своего неблагоразумного поведения был проклят владетельницей замка и лишился своих земель.

Армянская тема в «Путешествии» Джона Мандевиля

XV глава, в которой Мандевиль рассказывает об Армении, имеет довольно длинное и несколько необычное название – «О землях Албании и Ливии. Об исполнении желаний в награду за развлечение ястреба; о Ноевом ковчеге» (Of the Landes of Albanye, and of Libye. Of the Wisshinges for Wacchinge of the Sperhauk; and of Noes Schippe)[1]. Уже само название главы говорит о жанровом своеобразии рассказа об Армении: оно указывает на соединение различных жанров – травелога, новеллы, легенды. Если названия глав в записках предшествующих путешественников («Здесь описывается Малая Армения», «Здесь описывается Великая Армения» у Марко Поло; «Продолжение путешествия по Араксу, О городе Наксуа, О земле Сагенсы[2] и о других местах» у Гийома Рубрука; «О Трапезонде и Великой Армении» – у Одорико Парденоне; «Об Армении» – у Журдена де Северака) отражают их отнесенность к определенному жанру – жанру путешествия, то название главы из «Путешествия по морю и по суше» Мандевиля указывает на то, что перед нами сборная, разножанровая глава.

Обратимся непосредственно к тексту интересующей нас армянской части мандевилевского «Путешествия...». Из города Трапезунд путь путешественников вел в: «Малую Армению. И есть в той стране замок, стены которого увиты плющом, стоит он на скале и зовется замком ястреба. Находится он за городом Лайас (Ляяццо, Аяс), недалеко от города Pharispee, принадлежащего владетелю Крука (Корикоса), богатого господина и доброго христианина, и там можно увидеть на очень красивом и богато уб-

[1] **Mandevile** 1869, 142.

[2] Сагенса – искажение слова «шахиншах», титула правителей города Ани.

ранном насесте ястреба и охраняющую его прекрасную даму. И дама исполнит первую же просьбу о земных благах того, кто семь дней и семь ночей, а как сказывают некоторые, три дня и три ночи в одиночестве, без сна будет развлекать ястреба. Однажды, волею судеб, царь Армении, который был достойным рыцарем, мужественным человеком и благородным принцем, развлек этого ястреба в течение положенного времени. Семь дней и семь ночей спустя пришла к нему дама и спросила о его желании, поскольку он этого заслужил. И он ответил, что он великий властелин, и царит у него на земле мир, и владеет он земными богатствами, и поэтому он желает лишь одного – овладеть телом прекрасной дамы. Она ответила ему, что он сам не ведает, о чем просит, и что он безумен просить того, чего не может иметь; он должен просить лишь о вещах земных, а она не земное существо, а фея-призрак. Но царь сказал, что ничего другого не желает. Дама ответила: «Я не могу отнять твоих мирских желаний; я не исполню ни твоего желания, ни тех, кто придет от тебя. Царь, у тебя в стране будет война без мира, вплоть до девятого колена вы будете в подчинении у ваших врагов; и вы будете лишены всех своих богатств; и никогда с того времени ни царь Армении, ни страна его не были в покое, не имели достатка и были с тех пор данниками сарацин»[3].

Джон Мандевиль, начав свое путешествие по Армении рассказом о ястребином замке, не ограничивается историей армянского царя и вводит в свое повествование несколько вставных рассказов – это рассказы о бедняке, пожелавшем стать богатым купцом, и «более мудром в своем желании, чем армянский царь», о тамплиере, потребовавшем неиссякаемый кошель с золотом и тем самым предавшем принципы своего ордена, и о многих других, не исполнивших требования дамы и наказанных ею. В результате фантастическая история о ястребином замке, имеющая ярко выраженное романное начало, неожиданно обнаруживает свой дидактический смысл и приобретает назидательный характер. В приведенном выше отрывке основной способ организации художественной действительности – введение развлекательного материала с элементами чудесного и фантастического в реально существующую и географически локализованную

[3] **Mandeville** 1900, 98–99.

действительность (Киликийская Армения с городами Айас, Корикос и Pharispee). Однако действительность эта локализована не только географически, но в какой-то степени и исторически. Как известно, 1322–1335 годы, дата написания книги, были тяжелыми для Киликийской Армении годами. Постоянные вторжения со стороны Египетского султаната, потеря важного торгового порта Айас, уступка Египетскому султанату территории страны до реки Пирам явились началом упадка Киликийского армянского государства. Автор путешествия, обрекая армянского царя и народ на лишения и войны, исходил, естественно, из создавшегося безвыходного положения Киликийской Армении.

Этот сюжет получил свое неожиданное преломление в романизированном «Путешествии по Европе, Азии и Африке с 1396 года по 1427 год» баварца Иоганна Шильтбергера. Заимствовав у Жана Мандевиля историю об армянском царе и ястребином замке и сохранив основные элементы сюжета (описание ястребиного замка, условия владетельницы замка, проклятие), он присовокупляет к рассказу своего предшественника записи, построенные на основе увиденного воочию. «Когда я с товарищами находился в ее (крепости с ястребом) окрестностях, – делится своими воспоминаниями баварский путешественник, – мы попросили человека, чтобы он свел нас к крепости, и дали ему за это денег. Когда мы пришли туда, то один из моих товарищей вознамерился остаться там и бодрствовать. Однако наш проводник заметил ему, что он пропал бы без вести, если бы ему не удалось выполнить условие. Причем крепость эта до такой степени была окружена зарослями, что доступ к ней найти было невозможно. Кроме того, греческие священники запрещают входить туда, говоря, что в этом деле замешан дьявол. Итак, мы возвратились в город Керасун *(Kereson)* в упомянутом королевстве»[4].

Рассказ о ястребином замке и армянском царе, проклятом владетельницей замка (в романе владетельница замка – сестра Мелюзины – Мелиор), станет одной из ведущих сюжетных линий романа Мелюзина (1387г.), которой Жан из Арраса заключит свое повествование о фее Мелюзине, покровительнице царского рода Лузиньянов. Сюжет об армян-

[4] **Шильтбергер** 1867, 43; **Schiltberger** 1895, 56.

ском царе и ястребином замке был использован также Кулдреттом (конец XIV в.) в стихотворном романе «Книга о Лузиньянах или Мелюзина», посвященном истории дома Лузиньянов.

Истоки легенды и локализация ястребиного замка

Расположение ястребиного замка, как и истоки легенды о ястребином замке, впервые поведанные Мандевилем, стали предметом пристального внимания учёных. Были предприняты попытки поиска претекста данной легенды, а также выявления реального локуса, в котором размещается замок и совершается действие.

Начнем с поиска локализации ястребиного замка-крепости. Название замка «ястребиный» («соколиный»), на первый взгляд, является плодом фантазии автора и не имеет конкретного историко-географического звучания. При более детальном его изучении возникают некоторые ассоциации с местностями в Армении, имеющими корень «ястреб», «сокол». Флорентийский путешественник и торговец Бальдуччи Пеголотти в своем известном труде «Практика торговли», написанном в 30-х гг. XIVв., описывая торговый путь Айас – Тебриз, наряду с другими станционными пунктами, приводит название станции *Piana di Falconieri*, что по-итальянски означает «долина соколиной охоты». «В древнеармянских источниках, – пишет Я.А. Манандян, – упоминается местность под названием «Базудзор» или «Соколиное ущелье», которая может быть сопоставлена с Piana di Falconieri»[5]. Г. Микаелян утверждает, что корнем «сокол» (базэ – арм.) обозначался ряд местностей в Армении, недалеко от границы с Ираном[6]. Особо следует отметить о расположенном в Киликийской Армении, недалеко от Бардзрберда Базэберде (Բազբերդ, Բազէի բերդ Ցնաբերդ)[7], что в переводе на русский язык означает *Соколиный замок*. Соколиные местности в Армении, в частности Базэберд, стали, по-видимому, известны европейцам, в том числе и автору рассматриваемой книги, Джону Мандевилю, который, назвав замок «соколиным», придал тем самым ему географическую конкретность.

[5] **Манандян** 1954, 295.
[6] **Микаелян** 1952, 359.
[7] Բազբերդ 1986–2001, 544:

Согласно тексту Мандевиля, местность, в которой расположен этот замок-крепость, «находится за городом Лайас (Лаяццо, Аяс), недалеко от города Pharispé». В вопросе локализации этой местности мнения расходятся. Г. Алишан[8] идентифицирует ее с Partzerpert-ом (Բարձրբերդ-ом), расположенным к востоку от Молевона[9] и к северо-западу от Сиса.

Вальтер Ксавье, автор книги «До великих открытий: образ земли в XIV веке: путешествие Мандевиля» – с городом, расположенным между Айасом и Корикосом[10].

В комментариях к «Путешествию» Иоганна Шильтбергера на английском языке[11] *Замок Ястреба* (Castel d`Epervier) приравнивается к «Девичьему замку» (Кыз-Калеси). Отправной точкой в выдвинутой гипотезе является город Керасун, близ которого, недалеко от дороги, ведущей из Кастамуни в Боябад, возле Таш-Купри, расположен древний Кыз-Калеси, увиденный путешественником Уильямом Фрэнсисом Эйнсвортом («мы увидели замок, расположенный на вершине изолированной скалы. Местным жителям это место известно под названием Кыз-Калеси [Замок Девы] (the Virgin's Castle), весьма распространенным на Востоке и означающим «непокоренный»)[12].

Переводчик «Путешествия Ивана Шильтбергера по Европе, Азии и Африке» Ф.К. Брун предполагает, что ястребиная башня находилась «недалеко от города, именуемого по-гречески Керасун *(Kureson),* лежащего между Самсуном и Трапезундом»[13].

Матфей Эдесский помещает крепость Бардзрберд на расстоянии дня ходьбы от Сиса[14]. Виктор Ланглуа, видимо, исходя из текста Матфея Эдесского, пишет: «Крепость Бардзрберд расположена на расстоянии одного дня от Сиса»[15].

---

[8] **Alishan** 1899, 156–158.

[9] Молевон – крепость в Горной Киликии.

[10] **Xavier** 1997, 388.

[11] **Schiltberger** 1879, 149.

[12] **Ainsworth** 1842, 87.

[13] **Шильтбергер** 1867, ком. 59.

[14] **Matthieu d'Édesse** 1858, 477.

[15] **Langlois** 1861, 408.

Одно из названий Partzerpert-а, Բարձրբերդ-а – Փարսիպե (Фарсипэ), что соответствует упоминаемому Мандевилем городу Pharispee, а это является прямым доказательством верности предположения Алишана[16] о том, что в тексте Мандевиля речь идет о Partzerpert-е, в переводе на русский язык означающем *Высокая крепость*.

Что касается источника легенды, то для Шильтбергера при написании истории о ястребе и армянском царе таковым стал, как показали исследователи, немецкий перевод «Путешествия» Джона Мандевиля. Альбрехт Классен склонен считать, что Шильтбергер, возможно, опирался на немецкий перевод «Путешествий» Джона Мандевиля, созданный Мишелем Вельсером[17] где-то между 1393 и 1399 годами[18]. А вот источник, взятый за основу Мандевилем, так и не выяснен, хотя и делались попытки выявления исходного текста – претекста.

Так, исследовательница творчества Мандевиля Кристиан Делюз ссылается на древнюю армянскую легенду, зарегистрированную епископом Падерборна и Утрехта, посланником Оттона IV Вильбрандом Ольденбургским[19] (до 1180–1233 гг.). В 1211–1212 гг. епископ Вильбранд, возвращаясь из своего паломничества в Святую Землю, успел побывать в ряде городов Киликийской Армении. Здесь, согласно его записям, ему рассказали о легендарной горе в окрестностях крепости Равнинной Киликии Тила[20] – Тилий (Thila) – «горе приключений» («montem de aventuris»). В арабских источниках эта крепость значится как ал-Тини (al-Tīnī) или Хисн ал-тинат (Ḥiṣn al-Tīnāt / Ṯīnāt), в латинских же – как Канамелла (Canamella)[21] или (Caramella, Caramela)[22].

В 647 году армянского летосчисления (1198), 6-го января, в день Богоявления, когда Левона короновали царем Киликийской Армении под

---

[16] **Բարձրբերդ** 1986–2001, 631.

[17] **Mandeville** 1974.

[18] **Classen** 2020, 52.

[19] **Deluz** 1988, 218–219.

[20] **Թիլ** 1986–2001, 450:

[21] Канамелла, Canamella состоит из двух слов: *canna*, что по-латински означает тростник и mella-мед. Видимо, в этой местности возделывали сахарный тростник.

[21] **Alishan** 1899, 475.

[22] **Իբն Աբդ ալ-Զահիր** 2021, 230.

покровительством римской церкви и германского императора, среди присутствующих князей – владетелей крепостей был Роберт – владетель Тила. В пору же посещения Вильбрандом Ольденбургским Тила, владетелем его, судя по «Летописи» Смбата Гундстабля, был Чослин (Жослин)[23].

Судя по описанию расположения Канамеллы Вильбрандом Ольденбургским, эта прибрежная крепость расположена вблизи Мамистры, к северу от Александретты. Вильбранд Ольденбургский пишет: «Затем, оставив черную крепость короля справа и миновав некий форт, называемый Канамелла, мы подошли к Мамистере» («Deinde relinquentes ad dextram castrum regis nigrum et transeuntes castellum quoddam, Canamellam uidelicet, uenimus Mamistere»)[24],

«Вернувшись в Канамеллу, о которой я говорил выше, – продолжает свое повествование Вильбранд Ольденбургский, – мы пришли в Тилу и посетили прекрасный замок одного дворянина. Замок расположен на красивой горе, которую они называют *Горой приключений*, ибо, как мы слышали из достоверного рассказа, тот, кто после шестинедельного поста и дней покаяний взойдет на упомянутую гору, того, несомненно, ждут удача и успех»[25].

Напрашивается вопрос: кто поведал эту легенду епископу из Утрехта? Поскольку он особо подчеркивает, что не сомневается в достоверности рассказа, то есть поставщик информации заслуживает доверия, то следует предположить, что транслятором рассказа был человек высокородный, скорее всего, представитель рыцарского ордена. В пользу этой гипотезы говорит и то, что в 1214 году Левон II отдал порт Канамеллу, на два года, во владение госпитальерам, в обмен на деньги, которые он у них занял[26]. Дальнейшая судьба порта связана с орденом тамплиеров[27].

И действительно, в «Itinerarium terrae sanctae» Ольденбургского в продолжении рассказа о «горе приключений» приводится история о не-

---

[23] **Смбат Спарапет** 1974, 116.

[24] **Oldenborg Wibrandus de** 1864, 175.

[25] **Oldenborg Wibrandus de** 1864, 179–180.

[26] **Langlois** 1863, 76; **Alishan** 1899, 475.

[27] В 1266 году, когда мамлюкский султан Бейбарс завоевал крепость, она была во владении тамплиеров (**Իբն Աբդ ալ-Զահիր** 2021, 37).

коем антиохийском рыцаре, с которым беседовал путешественник. Рыцарь рассказал Ольденбургскому, что после совершения предписанной церемонии (шестинедельного поста и дней покаяний), он обнаружил салфетку[28], которая обеспечила его всем, что могло быть необходимо для его семьи и его гостей. Рыцарь добавил, что было бы большим счастьем, если бы такое чудо могло произойти с нуждающимися[29].

Включенная Вильбрандом Ольденбургским в итинерарий легенда носит локальный характер, ибо привязана к определенной местности – горе в окрестностях крепости Тила – «горе приключений». Фактически благодаря Ольденбургскому была зарегистрирована и сохранена армянская легенда, распространенная в Киликийской Армении в начале XIII века.

Можно ли считать легенду, поведанную посланнику императора Священной Римской империи Вильбранду Ольденбургскому, в достоверности которой он не сомневался, «архетипической матрицей» представленного Мандевилем рассказа о ястребином замке на горе? И да, и нет. Предположим, что Мандевиль, находясь под влиянием этой легенды, которая, видимо, была широко распространена в границах Киликийского царства, взял за основу мотив «испытание – воздаяние». Однако это ценностно-смысловое ядро Мандевиль обогащает дополнительными мотивами, расширяя и усложняя тем самым структуру нарратива. Повествователь конструирует сюжет по схеме авантюрно-приключенческого романа. Наряду с этим поведанная им история не лишена историчности: историческое время действия обозначено.

Сопоставим мандевилевскую и ольденбургскую версии.

1. Их объединяет общая фабульная структура – ведущий мотив «испытание – воздаяние»: «кто после шестинедельного поста и дней покаяний взойдет на упомянутую гору, несомненно, того ждет удача и успех» у Ольденбургского, и «дама исполнит первую же просьбу о земных благах того, кто семь дней и семь ночей, а как сказывают некоторые, три дня и три ночи в одиночестве, без сна будет развлекать ястреба» у Мандевиля.

---

[28] В русском фольклоре – скатерть-самобранка.

[29] **Oldenborg Wibrandus de** 1864, 180.

2. Место действия. У обоих фигурирует крепость (замок) на горе. У Ольденбургского – гора приключений, у Мандевиля – гора, на которой замок прекрасной девицы с ястребом.

На этом сходство заканчивается. В легенде, переданной Ольденбургским, выпадает такой важный элемент композиции мандевилевского рассказа, как нарушение табу: нарушая запрет, герой испытывает судьбу.

Заключение

Нами была сделана попытка рассмотреть претекст легенды о ястребином замке и проклятом армянском царе, представленной в травелоге Джона Мандевиля, который стал источником для «Путешествия» Иоганна Шильтбергера и романов «Мелюзина» Жана из Арраса и Кулдретта относительно ястребиного замка, а также уточнить место локализации ястребиного замка-крепости, в котором происходило действие легенды. Возможно, в дальнейшем будут выявлены дополнительные доказательства в пользу выдвинутых положений.

БИБЛИОГРАФИЯ

Իբն Աբդ ալ-Զահիր 2021, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Արաբական աղբյուրներ, Կիլիկյան Հայաստանի պատմության մամլուքյան սկզբնաղբյուրները. Դ, Թարգմ. բնագրերից, առաջաբանը եվ ծանոթագրությունները՝ Գագիկ Դանիելյանի, Երևան, Մատենադարան, 338 էջ:

Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ. 1986–2001, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. Երևան, Երևանի Համալսարանի հրատ. 4814 էջ:

Манандян Я.А. 1954, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, изд-во АН АрмССР, 354 с.

Микаелян Г.Г. 1952, История Киликийского армянского государства, Ереван, изд-во АН Арм.ССР, 534 с.

Смбат Спарапет 1974, Летопись, Ереван, «Айастан», 146 с.

Шильтбергер, Иоганн 1867, Путешествие Ивана Шильтбергера по Европе, Азии и Африке с 1394 года по 1427 год (перевод Ф.К. Бруна), Одесса, Записки императорского Новороссийского университета, т. 1, 55 с.

Ainsworth William 1842, Travels and Researches in Asia Minor, Mesopotamia, Chaldea, and Armenia Armenia by Ainsworth, William, London, John. W. Parker, vol. I, 364 p.

Alishan Léon 1899, Sissouan, ou L'Arméno-Cilicie: description géographique et historique, avec cartes et illustrations / traduit du texte arménien, Venise, S. Lazare, 540 p.

Classen A. 2020, The Sparrow Hawk Castle – A Mostly Ignored Literary Motif Across the Cultures and the Centurie. (2020) – In: Quidditas vol. 41 p. 43–68

Deluz Ch. 1988, Le Livre de Jehan de Mandeville, une «géographie» au XIV-e siècle, Louvain-la-Neuve: Université Catholique de Louvain, published by Brepols – Harvey Miller, p. 511 p.

Langlois V. 1863, Le Trésor des Chartes d'Arménie, Venise, Typographie Arménienne de Saint Lazare, 242 p.

Langlois V. 1861, Voyage dans la Cilicie et dans les montagnes du Taurus exécuté pendant les années 1852–1853, par Victor Langlois, Paris, Benjamin Duprat, 483 p.

Mandeville John 1974, Sir John Mandevilles Reisebeschreibung. In deutscher Übersetzung von Michel Velser. Nach der Stuttgarter Papierhandschrift Cod. HB V 86, hg. von Eric John Morrall, Berlin. 285 c.

Mandeville John 1900, The Travels of Sir John Mandeville, The version of the Cotton Manuscript in modern spelling, London and New York, Macmillan, 408p.

Matthieu d'Édesse 1858, Chronique de Matthieu d'Édesse, – in Bibliothèque historique arménienne par Edouard Dulaurier, Paris , Durand, 1-322 p.

Maundevile John 1869, The Voiage and Travaile of Sir John Maundevile, London, F.S. Ellis, 326 p.

Oldenborg Wibrandus de 1864, Peregrinatores medii aevi quatuor. Burchardus de Monte Sion, Ricoldus de Monte Crucis, Odoricus de Foro Julii, Wibrandus de Oldenborg. Quorum duos nunc primum edidit, duos ad fidem librorum manuscriptorum, Johann C.M. Laurent, Lipsiae, Hinrichs, 199 p.

Schiltberger Johann 1879, The Bondage and Travelrs Johann Schiltberger: a native of Bavaria, in Europe, Asia,and Africa, 1396–1427. London, Printed for the Hakluyt Society, 263 p.

Schiltberger Hans 1895, Schiltbergers Hans Reisebuch; nach der Nürnberger Handschrift, herausgegeben von Valentin Langmantel, Tübingen, Litterarischer Verein, 200 S.

Xavier Walter 1997, Avant les grandes découvertes: une image de la terre au XIVe siècle: Le voyage de Mandeville, Roissy-en-France, Alban, 705 p.

ԱՐԵՎՄՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԳԵՆԴԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԸ՝ ԲԱԶԵԻ ԱՄՐՈՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԱՆԻԾՎԱԾ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ

ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ Գ.

Ամփոփում

Բանալի բառեր՝ բազեի ամրոց, սկզբնաղբյուր, Ջոն Մանդեվիլ, Յոհան Շիլտբերգեր, Ժան դ'Արաս, Կուլդրետ, Վիլբրանդ Օլդենբուրգցի:

Եվրոպական գրականության մեջ լայնորեն ներկայացված է Բազեի ամրոցի և հայոց անիծված թագավորի պատմությունը: Այս սյուժեն առաջին անգամ օգտագործել է Ջոն Մանդեվիլը իր «Ճանապարհորդություն ծովով և ցամաքով» երկում: Մանդեվիլի տեքստը սկզբնաղբյուր դարձավ Յոհան Շիլտբերգերի «Ճանապարհորդություն Եվրոպայով, Ասիայով և Աֆրիկայով 1396–1427 թվականներին», ինչպես նաև Ժան դ'Արասի և Կուլդրետի «Մելուզին» վեպերի համար: Հոդվածի նպատակն է բացահայտել Ջոն Մանդեվիլի ստեղծագործության մեջ օգտագործված լեգենդի սկզբնաղբյուրը, և պարզել այդ պատմության գործողության վայրի՝ *Բազեի ամրոցի* տեղագրությունը:

THE ARMENIAN TRACE OF THE WEST EUROPEAN LEGEND OF THE CASTLE SPARROWHAWK AND THE CURSED ARMENIAN KING

KARAGYOZIAN G.

Summary

***Keywords**:* the Castle Sparrowhawk, primary source, John Mandeville, Johann Schiltberger, Jean d'Arras, Couldrette, Wilbrand of Oldenburg.

The story of the Castle Sparrowhawk and the cursed Armenian king has been widely represented in European literature. The plot was first used by John Mandeville in his travelogue "The Voiage and Travaile of Sir John Maundevile". His text was the primary source for Johann Schiltberger's "The Bondage and Travels in Europe, Asia and Africa in 1396–1427", as well as the novels of "Melusine" by Jean d'Arras and Couldrette. The article seeks to trace the source of the legend used by John Mandeville and to clarify the location of the Sparrowhawk Castle-Fortress, in which the legend is set.

ԿԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ*
Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
karine.arakelyan.2016@mail.ru
ORCID: 0009-0001-2073-7021
DOI: 10.54503/1829-4073-2024.1.163–181

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԳԻԾԱՍՏԵՂԾ ԴԵՐԸ ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ

երգիծանք
հումոր
լեզու
խոսք
ոճ
պատկերավորման միջոց
գրական դիմանկար

ԱՄՓՈՓՈՒՄ

Գրական դիմանկարը համաշխարհային, նաև հայ գրականության մեջ ունի ուրույն դեր և հետաքրքիր զարգացում: Այն անցել է դարերի հոլովույթով, կրել զանազան փոփոխություններ և իր մի չափազանց կարևոր ու հետաքրքիր հանգրվանին է հասել XIX–XX դդ. արևմտահայ գրականության մեջ, և արևմտահայ բազմաթիվ գրողներ ու բանաստեղծներ անդրադարձել են այս ժանրին: Այս ամենից զատ գրական դիմանկարն ունեցավ մեկ այլ ուղղվածություն՝ երգիծականը, իսկ երգիծական դիմանկարն իր կատարելությանը հասցրին արևմտահայ ականավոր երգիծաբաններ Հակոբ Պարոնյանը և Երվանդ Օտյանը:

Արևմտահայ մեծ գրողների ավանդները շարունակեցին սփյուռքի հայ գրագետները, այդ թվում ֆրանսահայ անվանի գրող Նշան Պեշիկթաշլյանը, որն առավել հայտնի է որպես երգիծաբան: Պեշիկթաշլյանը նոր շունչ հաղորդեց գրական-երգիծական դիմանկարին, ինչի վառ ապացույցն են նրա հեղինակած հարյուրից ավելի դիմանկարները:

Դիմանկարներն աչքի են ընկնում տարբեր արժանիքներով՝ գաղափարական, գեղարվեստական և այլն: Դրանցից մեկն էլ ճոխ լեզուն է և զարմանալի պատկերավոր խոսքը, որին խիստ նպաստել է պատկերավորման լեզվական միջոցների առատությունը, դրանց ճիշտ ու տեղին կիրառությունը: Չափազանցությունները, նվազաբանությունները, փոխաբե-

* *Հոդվածը ներկայացվել է 19.08.23, գրախոսվել է 23.08.23, ընդունվել է տպագրության 30.04.24:*

րությունները, համեմատությունները, հակադրույթները և այլն խոսքը հարստացրել են տարբեր նրբերանգներով, օժտել այլաբանական նշանակությամբ, հաղորդել երգիծական բնույթ, որը, կախված ասելիքի առանձնահատկություններից, դրսևորվել է տարբեր կերպ՝ հումորայինից մինչև կծու հեգնական:

Ներածություն

Գրական դիմանկարի տեսակը համաշխարհային, նաև հայ գրականության մեջ ունի ուրույն դեր և հետաքրքիր զարգացում: Սկզբնապես այն դրսևորվել է կենսագրական ժանրի միջոցով, որը հայ գրականության մեջ ունի վաղեմի պատմություն: Բավական է հիշել, որ հայերենի գրավոր շրջանի առաջին գործը՝ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը, փաստացի գրական դիմանկար է: V դարից սկսյալ մեր պատմիչների երկերում ևս հանդիպում ենք նշանավոր անձանց՝ հոգևորականների, աշխարհականների, պետական, ռազմական գործիչների և այլոց արտաքին ու ներքին, սեղմ կամ ծավալուն նկարագրությունների, որոնք ևս կարելի է համարել դիմանկար:

Այս ժանրը հանդես է եկել սրբախոսական հիմնական տեսակների՝ վարքերի ու վկայաբանությունների տեսքով, և կա կարծիք, որ սրանց «ընդերքում են սաղմնավորվել փոքր ծավալի գեղարվեստական արձակի ժամանակակից այնպիսի ժանրեր, ինչպիսիք են նորավեպը, պատմվածքը և այլն»[1]: Անշուշտ նշվածների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի գրական դիմանկարը: Դիմանկարն անցել է դարերի հոլովույթով, կրել զանազան փոփոխություններ և իր մի չափազանց հետաքրքիր ու կարևոր հանգրվանին է հասել XIX–XX դդ. արևմտահայ գրականության մեջ: Ինչպես նշում է հետազոտողը. «Գրականքննադատական և հուշագրային-կենսագրական դիմանկարների կողքին արևմտահայոց մոտ, իբրև ինքնուրույն ժանր, աստիճանաբար ձևավորվում է գրական դիմանկարի միանգամայն նոր ու անօրինակ տեսակ՝ գրական-գեղարվեստական դիմանկարը»[2]:

Արևմտահայ բազմաթիվ գրողներ ու բանաստեղծներ անդրադարձել են այս ժանրին: Մեկը մյուսի հետևից իրենց դիմանկարներն են հրատարակել Գրիգոր Զոհրապը, Օննիկ Չիֆթե Սարաֆը, Թեոդիկը, Սիպիլը, Տիգրան Արփիարյանը և այլք: Գրական դիմանկարների կամ, ինչպես ինքն է նշել, գրական կենդանագիրների հեղինակ է նաև արևմտահայ ականավոր քնարերգու

[1] **Տեր-Դավթյան** 1984, 38:

[2] **Մակարյան** 2002, 23:

Միսաք Մեծարենցը: Նրա կենդանագիրները նվիրված են Եղիշե եպիսկոպոս Դուրյանին, Գրիգոր Զոհրապին, անտիպ բանաստեղծ Վահրամ Թաթուլին: Մեծարենցը անդրադարձ է կատարում նշված հեղինակների քնարերգությանը և նշում. «այս «Դեմքերը» կենդանագրած եմ լոկ բանաստեղծական տեսակետով»[3]:

Այս ամենից զատ գրական դիմանկարն ունեցավ մեկ այլ՝ երգիծական ուղղվածությունը, իսկ երգիծական դիմանկարն իր կատարելությանը հասցրին արևմտահայ ականավոր երգիծաբաններ Հակոբ Պարոնյանը և Երվանդ Օտյանը: Պետք է նշել, որ երգիծական դիմանկարը ևս հայ գրականության մեջ նորություն չէր և գալիս էր դեռևս սկզբնական շրջանից: Հիշենք միայն Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունից» հայտնի Հովհան եպիսկոպոսին նվիրված մանրապատումային դրվագները: Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջերը» և Երվանդ Օտյանի «Մեր երեսփոխանները» եղան այն կոթողային երկերը, որոնց գրական - երգիծական դիմանկարների անկրկնելի նմուշները ցայսօր մնում են չգերազանցված թե՛ գաղափարական, թե՛ գեղագիտական առումներով:

Արևմտահայ մեծ գրողների, նաև երգիծաբանների ավանդները շարունակեցին սփյուռքի հայ գրագետները, այդ թվում ֆրանսահայ անվանի գրող Նշան Պեշիկթաշլյանը, որն առավել հայտնի է իբրև երգիծաբան: Ի թիվս բազմաթիվ այլ ստեղծագործությունների՝ Ն. Պեշիկթաշլյանը նոր շունչ հաղորդեց գրական - երգիծական դիմանկարին, ինչի վառ ապացույցն են նրա հեղինակած հարյուրից ավելի դիմանկարները: Ն. Պեշիկթաշլյանի դիմանկարները չափազանց բազմազան են և չեն ներառում միայն մարդկային դեմքեր, այդ իսկ պատճառով գրականագիտության մեջ իրավամբ փորձ է կատարվել այս դիմանկարները բաժանել երկու խմբի՝ «անհատական. երբ երգիծվել են հայ հասարակական - քաղաքական, մշակութային գործիչները և ընդհանրական, երբ հեղինակի երգիծանքի թիրախ են դարձել մարդկային առանձնահատկությունների հավաքական կրողները կամ որևէ խմբի պատկանող մարդիկ՝ դառնալով յուրատեսակ գրական պատկեր-կերպարներ»[4]:

Պատկերավորման լեզվական միջոցները Նշան Պեշիկթաշլյանի ծաղրանկարներում

[3] **Մեծարենց** 1981, 229:

[4] **Բալայան** 2019, 116:

Նշան Պեշիկթաշլյանի երգիծական ստեղծագործություններն աչքի են ընկնում լեզվաոճական տարբեր միջոցների հետաքրքիր ու ինքնատիպ կիրառություններով, և այս հոդվածում ուզում ենք անդրադառնալ երգիծանք կերտող լեզվական իրողություններին՝ Նշան Պեշիկթաշլյանի գրական դիմանկարներում: Այդ իրողություններից են պատկերավորման ամենատարբեր միջոցները, որոնք հմտորեն ու տեղին կիրառել է հեղինակը:

Չափազանցություն

Պատկերավորման միջոցներից նախևառաջ հիշենք չափազանցությունը, որը երգիծաբանության մեջ առհասարակ ունի հաճախակի կիրառություն: Չափազանցությունը ենթադրում է գույների խտացում, մտքի կամ գաղափարի արտահայտում՝ ոչ իրական չափերով, ինչի շնորհիվ երգիծվող երևույթն ավելի ցայտուն, տպավորիչ ու գունեղ է դառնում:

Հայաստանի առաջին հանրապետության վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի դիմանկարում Ն. Պեշիկթաշլյանը, ի թիվս այլ «արժանիքների», հեգնում է նրա խոսելու մոլուցքը: Խոսք, որ երբեմն անիմաստ է, շատ հաճախ՝ ազգի ու հայրենիքի համար պարզապես վնասակար: Այցելելով Հայաստանի գյուղերն ու շրջանները՝ Ա. Խատիսյանը հեռագիր է ուղարկում Երևան, որը երգիծական չափազանցության կարկառուն օրինակ է. «Երէկ ակումբում խօսեցի ուղիղ վեց ժամ, կէսօրին ճաշասեղանի վրայ ուղիղ չորս ժամ, երեկոյեան խօսեցի եօթը ժամ, իսկ կէս գիշերուայ մօտ՝ ուղիղ տասը ժամ: Մի օրուայ մէջ խօսել եմ անդադար քսանեւեօթը ժամ»[5]:

Չպետք է սակայն եզրակացնել, որ չափազանցությունը գույները խտացնում է միայն բացասական իմաստով և խոսքը վերածում կծու հեգնականի: Այն կարող է օգնել արտահայտելու հումորային տրամադրություն և, ինչու չէ, խոսքին դրական լիցքեր հաղորդել: Այսպես է հայ գրական անդաստանի երկու անխոնջ մշակների՝ Արշակ Չոպանյանի և Վահան Թեքեյանի դիմանկարներում, որտեղ հեղինակը նաև չափազանցությունների միջոցով է արտահայտում իր հիացմունքը նշված անձանց գործունեության հանդեպ:

Ընդգծելով հրապարակախոս, քննադատ Արշակ Չոպանյանի անմնացորդ նվիրումը, աշխատասիրությունը, ազգասիրությունը՝ Պեշիկթաշլյանը գրում է. «Կ'աշխատի օրական 96 ժամ: Մէկ ժամուան մէջ 240 վայրկեանի գործ կարտադրէ...Չօպանեան գրած ատեն գրիչը կը բռնէ հորիզոնական, արեւմուտքէն արեւելք: Գրիչին կոթը կը նայի Հրոյ Երկիր (Բաթոկոնիա) ու

[5] **Պեշիկթաշլեան** 2009, 69–70: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքին կից՝ փակագծերի մեջ, Ծ. նշումով:

ծայրը՝ Չինումաչին: Մէկ երկու ժամուան մէջ հազար մեթր ժապաւէնով քրոնիկ մը կը գրէ, ընելով աշխարհի շրջանը: Կը գրէ նաեւ ժամական երեսուն - քառասուն նամակ: Կը վարէ տասը ճակատին վրայ ահագին գրչապայքարներ: Եթէ իր բոլոր բանավէճերը հաւաքենք ու վառենք, կրնանք վեց ամիս տաք պահել Սիպերիան» (Ծ. 25):

Ա. Չոպանյանի՝ Մայր հայրենիքի և Սփյուռքի գաղթօջախների կյանքին, գրական և մշակութային անցուդարձին քաջատեղյակ լինելը, դրանցով ապրելն ու դրանց զարգացման գործին սեփական մեծ լուման ընծայաբերելը հեղինակն արտահայտում է մի չափազանցությամբ, որին խիստ միահյուսված է փոխաբերություն. «Աջ ձեռքը դրած է Հայաստանի վրայ, ձախ ձեռքը Միացեալ Նահանգներուն վրայ, աջ ոտքը Սուրիոյ վրայ, ձախ ոտքն ալ Եգիպտոսի վրայ, իսկ գլուխը կը մնայ Փարիզ» (Ծ. 26):

Վ. Թեքեյանին ներկայացնելով որպես հայ քնարերգության գագաթներից մեկը՝ Ն. Պեշիկթաշլյանը հիանում է նրա տաղանդով. համբերությամբ, աշխատասիրությամբ, և իր հիացմունքը դարձյալ արտահայտում է չափազանցությունների միջոցով՝ հաղորդելով նաև հումորային տրամադրություն. «Կը չափէ նաեւ հայ լեզուին բոլոր բառերուն իմաստները: Կարճերը կ'երկարէ, խիստ երկարները կը կարճեցնէ, շատ հաստերն ալ կը սրէ ու կ'օծէ պղպեղով» (Ծ. 35):

Երբեմն չափազանցությունը զուգորդվում է պատկերավորման այլ միջոցների, նաև՝ ոճական հնարանքների կիրառությամբ: Նկարիչ Սարգիս Խաչատուրյանի այրու դիմանկարում, որ վերնագրված է «Վավա Սարգիս», հեղինակն ասում է, որ ամբողջ փարիզահայության խոսք ու զրույցի նյութն է տիկին Վավան, իսկ բազմաթիվ հայուհիներ հարցնում են, թե ինչու է նկարչուհին մշտապես գլխարկով, ինչին հեղինակը պատասխանում է. «Չեմ գիտեր, իրեն հարցուցէք. ինք ամէն բան գիտէ, չգիտցածը չկայ, հմուտ կին է, անգիտաց ալ պիտանի է»[6]:

Երգիծվում է հերոսուհու քաղքենիությունն ու մեծամտությունը, իսկ գույներն ավելի են խտանում միջնադարի հայ անվանի բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացու գրքի փոփոխված խորագրի շնորհիվ: Ամիրդովլաթն իր գիրքը, որը կարելի է դեղամիջոցների հանրագիտարան համարել, անվանել է «Անգիտաց անպետ»՝ տալով վերնագրին չափածո բացատրություն.

Եղի՛ր հետևող իմաստության հետ,

---

[6] **Պէշիկթաշլեան** 1952, 41: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքին կից՝ փակագծերի մեջ, Ն. ծ. նշումով:

Եթե չուսանիս, բժիշկ ես անգետ:

Լինիս դու գիտուն, արա բանիս պետ,

Գրոցս անունն է «Անգետի անպետ»[7]:

Գրելով «անգիտաց ալ պիտանի է»՝ Ն. Պեշիկթաշլյանն ավելի է ընդգծում տիկին Վավայի գլխարկով հետաքրքրվող փարիզահայուհիների սնամեջ ու քաղքենի էությունը:

Նվազաբանություն

Չափազանցության հակառակ երևույթը նվազաբանությունն է, որի դեպքում երևույթները չափազանց փոքրացվում են, երբեմն զրոյանում: Չափազանցության համեմատ այն շատ ավելի սակավ գործածություն ունի, ինչը չի ենթադրում, թե ոճական առումով նվազ արտահայտիչ է: Այս միջոցը Ն. Պեշիկթաշլյանը քանիցս կիրառել է Ալեքսանդր Խատիսյանի դիմանկարում, հատկապես պատմական անցքերին վերաբերող դրվագներում:

1918 թ. բոլշևիկների և թուրքերի միջև կնքվել էր Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, համաձայն որի բոլշևիկները պարտավորվեցին թուրքերին վերադարձնել ոչ միայն պատերազմի ընթացքում գրաված Արևմտյան Հայաստանի տարածքները, այլև 1878-ից Ռուսական կայսրության մաս հանդիսացող Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերը: Հաջորդում են, այսպես կոչված, հաշտության և բարեկամության բանակցությունները: Անդրկովկասից դաշնակցականների քառասուն հոգանոց պատգամավորություն մեկնում է Տրապիզոն: Այստեղ բանակցությունների ընթացքում Ա. Խատիսյանը և Հ. Քաջազնունին չեն կարողանում որևէ ազդեցություն ունենալ դիվանագիտական գործընթացների վրա: Այնուամենայնիվ նրանք փորձում են բարձրացնել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնախնդիրը, որը թուրքերի և խաղաղարար պատվիրակության որոշ անդամների կողմից որակավորվում է որպես միջամտություն Թուրքիայի ներքին գործերին: Թուրք պատվիրակները բացահայտ հայտարարում են, որ իրենց պայմանները չընդունելու պարագայում իրենք ոչ միայն կկոտորեն Թուրքիայի տարածքում բնակվող հայերին, այլև չեն խնայի կովկասահայերին:

Ն. Պեշիկթաշլյանն այս իրավիճակը ներկայացնում է նվազաբանության միջոցով՝ արտահայտելով խորը ցավ ու դառը հեգնանք. «Բանակցութիւններէն կը ծնի մուկ մը, եւ քառասուն պատգամավորները այս մուկին ընկերակ-

---

[7] Ամիրդովլաթ Ամասիացի 2005, 3:

ցութիւնով կը նստին նաւ ու ճամբայ կ'ելլեն դէպի Պաթում, ուր տնկուած կը տեսնեն թրքական դրօշը: Նաւը կը փախչի դէպի Բօթի» (Ծ. 66):

Դաժան ու խառնակ ժամանակները, նաև խաղաղարար, ավելի ստույգ՝ հայերի համար կործանարար բանակցությունները շարունակվում են: Դրանցից մեկի արդյունքն է լինում Բաթումի պայմանագիրը, որի մասին հեղինակը դարձյալ նվազաբանության միջոցով նույն դառնությամբ արձանագրում է. «Թուրքերը կը ծաղրեն Հայաստանի տարածութեան փոքրութիւնը՝ ըսելով. - Գերեզմանատուն մը տուինք հայերուն» (Ծ. 67):

Նվազաբանության դիպուկ օրինակի հանդիպում ենք քարտեզագիր և գնդապետ Զատիկ Խանզադյանի դիմանկարում: Թե՛ քարտեզագիր, թե՛ մանավանդ գնդապետ լինելուց հերոսը չափազանց հեռու է և ինչուն անուններն ընդամենը անթաքույց կերպով սեփական շահերին է ծառայեցնում: Այս ամենը Ն. Պեշիկթաշլյանի գրիչը հետևյալ կերպ է մեկնաբանում. «Եթէ աշխարհի բոլոր գնդապետները Խանզատեանին պէս ըլլային, մարդիկ հազիւ պիտի կարենային պատերազմիլ գնդասեղներով: Եզրակացութիւն: Զատիկ Խանզատեան հազիւ քարտէսի ու գնդասեղի գնդապետ մըն է... Աշխարհը իրեն համար քարտէս մըն է. զայն ամէն կերպ կրնայ գործածել. առայժմ ծալած է ու գրպանած» (Ն. ծ. 136, 140):

Փոխաբերություն

Գեղարվեստական գրականության մեջ պատկերավորման խիստ հաճախակի կիրառություն ունեցող միջոց է փոխաբերությունը, որը հաճախ է հանդիպում նաև երգիծական խոսքում: Ընդգծվել է, որ «փոխաբերությունը սահմանվում է որպես թաքնված համեմատություն, որն իրականացվում է մի առարկան անվանելով մյուսի փոխարեն և դրանով ի հայտ բերելով երկրորդին բնորոշ որևէ էական հատկանիշ»[8]:

Փոխաբերություններն ընդունված է բաժանել երկու հիմնական տեսակի՝ լեզվական և խոսքային: Լեզվական փոխաբերություններն ընդհանրական բնույթ ունեն. սրանք ժամանակի ընթացքում խոսքայինից վերաճել են լեզվականի: Խոսքային փոխաբերությունները, որոնց երբեմն անվանում են անհատական, ստեղծվում են անհատների՝ հիմնականում հեղինակների կողմից և խոսքային համապատասխան միջավայրում ծառայում որոշակի նպատակների: Փոխաբերությունները կարող են արտահայտվել մեկ բառով, կապակցութ-

---

[8] **Арнольд** 1973, 146.

յամբ, նախադասությամբ, երբեմն պարբերությամբ, մինչև իսկ ամբողջական ստեղծագործությամբ:

Լեզվական փոխաբերություն է *գլուխ* բառը, որը հայերենում ունի բազմաթիվ իմաստներ, այդ թվում՝ *խելոք, առաջնորդ* փոխաբերական նշանակությունները: Այսպիսի փոխաբերական գործածությունների հանդիպում ենք Արշակ Չոպանյանի և Մխիթարյան հայրերից Ներսես Ակինյանի դիմանկարներում: Վերջինի երգիծանկարը Ն. Պեշիկթաշլյանն սկսում է հետևյալ կերպ. «Հ. Ներսէն Ակինեան Վիէննական Մխիթարեան Միաբանութեան կարկառուն դէմքերէն է... Աւելի ճիշտ պիտի ըլլար ըսել ..գլուխներէն է, թէեւ գլուխ ըլլալէ աւելի ուղեղ է»[9]:

Ա. Չոպանյանի դիմանկարում, Արշակի ծննդյան դրվագում բժիշկն ավետում է ծնողներին՝ ասելով. «Ծնաւ գլուխ մը մեր անգլուխ ազգին համար» (Ծ. 22):

Ն. Պեշիկթաշլյանի ծաղրանկարներում հանդիպում են ամբողջական նախադասություններով արտահայտված ծավալուն փոխաբերություններ, որոնց միջոցով բազմակողմանիորեն ու բազմաշերտ են բնութագրվում առարկաներն ու երևույթները: Այսպիսի մի դեպք առկա է գրող Զապել Եսայանի դիմանկարում. «Ներկայիս ան հեռացած է մեր մեղաւոր եւ ունայն աշխարհէն: Կը գտնուի միւս աշխարհին՝ այսինքն խորհրդային արքայութեան մէջ: Թող իր հոգին ռատիօ կայաններու լոյսերուն մէջ լողայ, ամէն» (Ծ. 33):

Գործ ունենք սատիրայի՝ չզիջող ծաղրի հետ՝ կապված ոչ միայն և ոչ այնքան հերոսուհու, որքան Խորհրդային կայսրության հետ, որտեղ փորձ էր արվում երկիրը դրախտ ներկայացնելու՝ հակառակ բռնաճնշումներին, հազարավոր մարդկանց սպանդին ու աքսորին: Ինքը՝ Զապել Եսայանը, 1933-ին տեղափոխվել էր Խորհրդային Հայաստան, գովերգել խորհրդային կարգերը, անգամ 1937թ. փետրվարին «Գրական թերթում» սուր քննադատության էր ենթարկել «հակահեղափոխական - տրոցկիստական - դաշնակցական - նացիոնալիստական տարրերին», սակայն, ինչպես նշում է սփյուռքահայ անվանի մտավորական Պողոս Սնապյանը. «եղերական պայմաններու մեջ կատարուած նման յայտարարութիւնները իհարկէ փրկարար վահան մը չեղան Զապել Եսայեանին, որ սահմանադրական «շողշողուն լոյսերով» ողողուելէն ընդամէնը չորս ամիս ետք՝ ենթարկուեցաւ ստալինեան անսահման մռայլին ու

[9] **Պէշիկթաշլեան** 1954, 21: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքին կից՝ փակագծերի մեջ, Մ. նշումով:

դասուեցաւ իր մեղադրած մարդոց շարքին, «հակայեղափոխական Բակունցի, Ալազանի, Մահարու եւ միւսների հետ» ... »[10]:

Ծավալուն է Կոստան Զարյանի դիմանկարում առկա փոխաբերությունը, որի միջոցով հերոսը փորձում է բնութագրել հայ գրականությունը, որը խորապես հոգևոր է, ինչպիսին ժողովուրդն է, նրա պատմությունը, մշակույթը, հոգին. խորապես ողբերգական է, խորապես լուսավոր. «Հայոց գրականութիւնը մի պատարագ է, մի վերասլաց անհուն աղօթք, մի մեծանկար համայնապատկեր տառապանքի եւ խաչելութեան, մի Արարատ-Գողգոթա, ծածկուած ծիւնածաղիկներով, լոյսի գոհարներով, այնտեղ մի երկարաշունչ ու անմահ Խաչեցեալ խօսում է: Լեռը լցուած է մայրերի հեծեծանքով ու լռութիւն: Ծխում է խնկամանը խաչի ներքեւ...» (Մ. 41):

Փոխաբերության առանձին տեսակ են դարձվածներն ու դարձվածային կապակցությունները. «սրանք երկու և ավելի բառերի այնպիսի միություններ են, որոնք ամբողջությամբ առած մեկ փոխաբերական իմաստ են արտահայտում»[11]:

Դարձվածները հաճախ են դրսևորում երգիծաստեղծ ու ոճաստեղծ հատկություններ և դրանով պայմանավորված կիրառվում երգիծաբանության մեջ, նաև երգիծական դիմանկարներում: Բանաստեղծ Վահան Թեքեյանի դիմանկարը կերտել է նաև Երվանդ Օտյանը: Մասնավորապես, նա հիշում է մի այդպիսի դարձված. «Սուտ խենթ եղեր՝ վանքին հաւերը կուտէ»[12]: Ե. Օտյանը խոսում է իր հերոսի՝ Կեսարիայի Սուրբ Կարապետ վանքում և Երուսաղեմի վանքում վարած պաշտոնների մասին և ակնարկում, որ Վ. Թեքեյանն ունի տեսչական և ներկայացուցչական պաշտոններից շատ ավելի բարձր առաքելություն՝ բանաստեղծի կոչում. «Վահան Թէքէան վանքին հաւերը ուտելով չի կրնար ապրիլ ու պէտք չէ որ ապրի... իր ոտանաւորները նախադասելի են, քան Երուսաղէմէն ղրկելիք իր արձակ տեղեկագիրները»[13]:

Ն. Պեշիկթաշլյանը խոսքին երգիծական երանգ հաղորդելու նպատակով երբեմն կիրառել է դարձվածներ, իսկ ավելի հաճախ՝ դարձվածային տարբերակներ, որոնց ստեղծել է՝ կապված ասելիքի առանձնահատկությունների հետ: Նշված երկու տեսակների օրինակներ առկա են Ալեքսանդր Խատիսյանի դիմանկարում: Ա. Խատիսյանն ավարտել էր Խարկովի բժշկական համալ-

[10] **Սնապեան** 2008, 96:

[11] **Պողոսյան** 1991, 38:

[12] **Օտեան** 1999, 150:

[13] **Օտեան** 1999, 151–152:

սարանը, ապա վերադարձել Թիֆլիս, սակայն երբեք չէր աշխատել իր մասնագիտությամբ: Փոխարենը, նշում է հեղինակը. «Կը հետեւի Յիսուս Քրիստոսի պատուէրին՝ Բժիշկ, բժշկեա զանձն քո»: Բժշկութիւնը կը վերապահէ իր պատուական անձին ու կը սկսի դարմանել իր դիրքը: Իբրեւ ապաքինարան կը մտնէ Թիֆլիզի քաղաքապետարանը ու կ'ըլլայ օգնականը վրացի քաղաքագլուխ Չէրկէզովի» (Ծ. 63):

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Ա. Խատիսյանն անցնում է դաշնակցության շարքերը: Այս իրողությունը հեղինակը ներկայացնում է հետևյալ փոխաբերության միջոցով. «Թիֆլիզի քաղաքագլխութենէն կ'իյնայ... Դաշնակցութեան դռան առջեւ: Շատ դժուարութիւններով ներս կը մտնէ այդ դռնէն: Թթու Դաշնակցականներ կ'ըսէին.- Ուղտը ասեղի ծակից անց կը կենայ, բայց Խատիսովը Դաշնակցութեան դռնից չի կարող անց կենալ» (Ծ. 64):

Բացի դարձվածներից Ն. Պեշիկթաշլյանը փոխաբերություններ է ստեղծում հանրաճանաչ խոսքերի, նաև անվանի հերոսների նմանողությամբ: Նկարագրելով Արշակ Չոպանյանի ծնունդը և ընդգծելով դրա կարևորությունն ազգային կյանքում՝ հեղինակը դիմում է Մովսես Խորենացու Սուրբ Ծննդյան շարականին, որտեղ հրեշտակներն ավետում են Քրիստոսի ծնունդն՝ ասելով. «Ծնաւ նոր արքայ Ի Բեթղեհէմ քաղաքի. Որդիք մարդկան, օրհնեցեք, Զի վասն մեր մարմնացաւ»[14]:

Մեկ տեղանվան փոփոխությամբ Ն. Պեշիկթաշլյանը հումորային երանգ է հաղորդում շարադրանքին և գրում. «ծնաւ նոր արքայ ի Պէշիկթաշ քաղաքի» (Ծ. 22):

Նկարագրելով նույն Ա. Չոպանյանի աշխատասենյակը՝ Ն. Պեշիկթաշլյանն այն համեմատում է ճգնարանի հետ, իսկ Ա. Չոպանյանին՝ Ալեքսանդր Դյումայի «Կոմս Մոնտե-Քրիստո» վեպի հերոս Աբբա Ֆարիայի, որը բանտի ամենաանբարենպաստ պայմաններում զբաղվում էր գիտությամբ:

Կոստան Զարյանի դիմանկարում Ն. Պեշիկթաշլյանը խոսում է հերոսի ազգանվան մասին: Այն սկզբնապես եղել էր Եղիազարյան, ապա դարձել Զարյան: Այս փոփոխությունը հեղինակը բացատրում է հումորային եղանակով՝ փոխաբերության միջոցով՝ հիշելով աստվածաշնչյան Եղիա մարգարեին, որը չճաշակեց մահվան դառնությունը, քանի որ Աստված նրան պտտահողմով երկինք փոխադրեց: «Զարեան ծնած է Եղիազարեան մականունով: Տա-

[14] Հայ հին և միջնադարյան քնարերգություն 1987, 68:

րիներ յետոյ եղիան, ըստ իր սովորութեան, երկինք կը համբառնայ. իսկ Զարեան վարը կը մնայ» (Մ. 32):

Դիմանկարներում Ն. Պեշիկթաշլյանն ստեղծել է քաղաքական երգիծանքի անկրկնելի նմուշներ՝ դարձյալ արտահայտված հիմնականում ծավալուն փոխաբերությունների միջոցով: Սրանք սարկազմի հրաշալի օրինակներ են, որոնց միջոցով անխնա ծաղրվում է մեծ տերությունների հանցավոր քաղաքականությունը՝ փոքրաթիվ ժողովուրդների, մասնավորապես հայերի հանդեպ, Թուրքիայի ծավալապաշտական նկրտումները, նկարագրվում են դարասկզբին տեղի ունեցած ողբերգությունները, տարբեր անցքեր ու իրադարձություններ: Դրանցից մեկը ներկայացնում է Սարդարապատի ու Ղարաքիլիսայի հերոսամարտերը. «թուրքը մտած էր Կովկասեան Հայաստանէն ներս: Երեւանի ազգ խորհուրդը, Արամով, Դրոյով եւ հայ բանակով՝ օձիքէն կը բռնեն թուրքին ու Սարդարապատի եւ Ղարաքիլիսէի մէջ կը զարնեն գետին: Թուրքը գետնին տակը կը մտնէ ըսելով. «Թէշէքքիւրլեր, էֆենտի: Ես արդէն ընդերկրեայ էս ճամբան էի որոնում, Պաքուի նաւթերին ու կազոլինին հասնելու համար»: Թուրքը սակայն հողուն տակ կը հանդիպի գերմանացիին, որ կ'արգիլէ թուրքին դէպի Պաքու ուղեւորութիւնը» (Ծ. 67):

Մեկ այլ դրվագ ներկայացնում է Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագիրը. «Հայերուն կը մնար Երեւանը եւ Վաղարշապատը: Մին ազգային տուն, միւսը կրօնական տուն, երկուքին մէջ գտնուող տարածութիւնն ալ ազգային գերեզմանատուն» (Ծ. 73):

Համեմատություն

Պատկերավորման լայն տարածում ունեցող միջոց է համեմատությունը, որը մեծ կիրառություն ունի թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում: Նշան Պեշիկթաշլյանը գրական դիմանկարներում չափազանց հաճախակի է կիրառել համեմատություններ: Բավական է նշել, որ բացի շարադրանքում առկա համեմատություններից, բոլոր դիմանկարներն ավարտվում են հերոսի համեմատությամբ որևէ անձի, առարկայի կամ երևույթի հետ: Այս համեմատությունները հաճախ աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, քանի որ դրանց եզրերն առաջին հայացքից իրար հետ որևէ առնչություն ունենալ չեն կարող: Անսպասելիությունը երգիծական բնույթի ստեղծագործություններում շատ էական է և կարող է ասելիքը խիստ ծիծաղաշարժ դարձնել: Ինչպես նշվել է. «Հաջող համեմատության կարևորագույն հատկանիշներից մեկը անսպասելիության, նորույթի, հնարամտության տարրն է: Այդ իսկ պատճառով յուրա-

քանչյուր հեղինակ չափազանց անհատական է համեմատությունների ընտրության և գործածության իմաստով»[15]:

Հիշենք բարեկամության և ապուխտի համեմատությունը Ալեքսանդր Խատիսյանի ծաղրանկարում: Ա. Խատիսյանն ինչ-որ ժամանակ զբաղեցրել էր Թբիլիսիի քաղաքապետի պաշտոնը, խոսելով այդ մասին՝ Ն. Պեշիկթաշլյանն ակնարկում է նրա ճարպկության, բոլորի հետ լավ հարաբերություններ ստեղծելու «կարողության» մասին. «Ապուխտի պէս ջարդած էր իր բարեկամութիւնը ու շերտ-շերտ բաշխած բոլորին: Թիֆլիսի մէջ մարդ չկար, որ Խատիսովի բարեկամութեան ապուխտէն կտոր մը չունենար բերնին մէջ» (Ծ. 64):

Անսպասելի է գրող Տիգրան Չիթունիի համեմատությունը Վանա հայտնի ձկան հետ: Չիթունին գրում է ոտանավորներ, որոնք դժվար է արձակ կամ չափածո համարել: Ինչո՞ւ է այս միջակությանը հեղինակը համեմատում տառեխի հետ, գրելով. «Տիգրան Չիթունին կը նմանի Վանայ Ծովուն տառեխ ձուկին» (Ն.ծ.58): Հարցին դժվար կլինի պատասխանել, եթե անմիջապես չհաջորդի բացատրությունը. «Չորցած, աղած, կախուած» (Ն.ծ. 58):

Կան դեպքեր, երբ համեմատելին բնորոշվում է մեկից ավելի, երբեմն բազմաթիվ համեմատյալներով. դա հնարավորություն է տալիս անձին կամ առարկան բազմակողմանիորեն ու բազմաշերտ ներկայացնելու: Այսպես է Զապել Եսայանի դիմանկարում, որտեղ հեղինակը փորձում է հասկանալ հերոսուհու «դավանանքը»: Բոլոր ժամանակների և բոլոր հասարակարգերի մարդ լինելը, ամենուր հաճախ աղետաբեր հարմարվողականություն դրսևորելը հեղինակն արտահայտում է մի համեմատությամբ, որի առաջին եզրի՝ հերոսուհու դիմաց ունենք մի շարք եզրեր. «ան մերթ նման է եղած դաւանափոխ պուտտայականի, մերթ ուրացող քրիստոնեայի, մերթ հերձուածող արիոսեանի, հեթանոսի եւ հերետիկոսի ու վերջապէս ուղղափառ անաստուածի» (Ծ. 31):

Գեղարվեստական գրականության մեջ լայն տարածում ունեն ժխտական համեմատությունները: «Այստեղ միաժամանակ բացառվում է երկու երևույթների նույնությունը և դրանով իսկ ցույց է տրվում նրանց նմանությունը: Հեղինակն, ասեք, մեզ զգուշացնում է, որ երկու առարկաների նմանության հիման վրա չպետք է դրանք շփոթել իրար հետ»:[16]

Համեմատության այսպիսի օրինակի հանդիպում ենք Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Ներսես Ակինյանի դիմանկարում, որտեղ

[15] **Ефимов** 1961, 491.

[16] **Ջրբաշյան** 1980, 230:

վերջինը փորձում է բացատրել ֆրանսահայության և այլ գաղթօջախների հայության նմանություններն ու տարբերությունները: «Փարիզահայութիւնը ուրիշ տեղերու հայութեան պէս զբաղած չէ հասարակ շատախօսութիւնով, այլ դասախօսութիւնով, որ շատախօսութեան մշակած եւ մշակութային մէկ տեսակն է: Դասախօսութիւնը մտաւորական շատախօսութիւնն է եւ պէտք է քաջալերել ամենայն ինչ որ մտային է» (Մ. 26):

Համեմատությանն իմաստով շատ մոտ է զուգահեռականությունը, որի դեպքում «համադրվում են երկու երևույթներ և ընդգծվում է նրանց նմանությունը կամ տարբերությունը: Զուգահեռականությունը, ըստ էության, ծավալուն կամ ժխտական համեմատություն է, բայց առանց համեմատության մասերն իրար կապող բառերի»:[17]

Զուգահեռականություն առկա է Կոստան Զարյանի երգիծանկարում, որտեղ գրողը փորձում է ներկայացնել իր ապրած կյանքը, որը լի է եղել խելահեղ արկածներով, հիշարժան դեպքերով, այլևայլ հույզերով, հիասթափություններով և այլն: Այն չափազանց ծավալուն է, մեջբերենք հատված. «Իմ կեանքը եղել է մի պայրընեան պոէմա, մի նոր հազարումի գիշերներ, մի էպոխա, մի Շահնամէ... ասպետ սիրահարի անհաւատալի արկածախնդրութիւն, մի լեգենդական երկարաշունչ էպիզոդ...» (Մ. 45):

Ինչպես արդեն նշել ենք, Նշան Պեշիկթաշլյանն իր բոլոր դիմանկարներն ավարտում է համեմատություններով, որոնք սովորաբար ծավալուն են. սրանց միջոցով նա կարծես ամբողջացնում է կտավը և տալիս դրա ամփոփագիրը: Սրանցից յուրաքանչյուրն ինքնին մի մանրապատումային դրվագ է: Հիշենք Հայկ Սերենկյույանի դիմանկարը: Այս փուչ էությունն իրեն համարում է կուսակցական գործիչ, տարված է խոսելու մարմաջով, հասկանում է միայն մանր առևտրից, խարդավանքներից, բամբասանքներից: Շրջում է Ֆրանսիայի հայաշատ վայրերում, ամենուր պատուհաս ու դժբախտությունների պատճառ դառնում: Ն. Պեշիկթաշլյանն այս դիմանկարն ավարտում է հետևյալ համեմատություններով. «Հայկ Սերէնկիւլեան կը նմանի սատանայի մը որ օձի կերպարանք առած է: Եւ օձի մեջ մը որ մարդուկի կերպարանք առած է: Եւ մարդուկի մը որ մարդու կերպարանք առած է» (Ն. ծ. 116):

Չափազանց հետաքրքրական է Վահան Թեքեյանի դիմանկարի ավարտը, քանի որ հեղինակը նրան նմանեցնում է տարբեր սրբերի՝ Թովմաս

[17] **Ջրբաշյան, Մախչանյան** 1980, 115:

առաքյալին, Հակոբ Մծբնա հայրապետին, Մելիտոս եպիսկոպոսին, Մարուգե ճգնավորին:

Հակադրույթ

Երգիծաբանության մեջ պատկերավորման հաճախակի կիրառություն ունեցող միջոց է հակադրույթը, որով հակադիր իմաստ ունեցող բառերի գործածությամբ հակադրվում են առարկաներ, հատկանիշներ, երևույթներ: Իրականի և ցանկալիի աղաղակող հակասություններն ամենից ավելի ցայտուն արտահայտվում են պատկերավորման հենց այս միջոցով, և դա է պատճառը, որ այն խիստ տարածված է երգիծաբանության մեջ, նաև ծաղրանկարներում: Երբեմն երգիծաբանները հակադրույթով են սկսում երգիծանկարը, ինչպես Երվանդ Օտյանը՝ Վարդգեսի դիմանկարը. «Մեր ազգային խենթը: Խենթութիւնը դժուարին արուեստ մըն է, աւելի դժուար՝ քան խելացի ճանչցուելու արուեստը»[18]:

Հակադրույթները հաճախ օգնում են անձը բազմակողմանիորեն բնութագրելուն, նրա հոգեկան աշխարհի ծալքերը բացելուն: Հիշենք Կոստան Զարյանի դիմանկարը. երբ հերոսին հարցնում են, թե արդյոք նա հավատացյալ է, պատասխանը լինում է. «Հազար անգամ այո՛ եւ հազար անգամ էլ ո՛չ: Ե՛ւ այո, եւ՛ ոչ: Հաւատում եմ ոգեկան զօրութեան հրաշքներին ու միանգամայն պաշտում եմ նիւթերի զօրութիւնը եւ գեղեցկութիւնը» (Մ. 39): Ապա ավելացնում է. «Ես չեմ կարողացել հասկանալ թէ իմ գործած մեղքերի համար եմ լաց եղել թէ այդ քաղցր անցեալը վերապրելու ցանկութիւն եմ ունեցել» (Մ. 40):

Ն. Պեշիկթաշլյանը երգիծում է Կ. Զարյանի ինքնավստահությունը, սեփական գրականությունը բոլորից ավելի բարձր դասելու հավակնությունը, և դա անում է դարձյալ հակադրույթի միջոցով: Երբ Կ. Զարյանին հարցնում են, թե որն է նրա գովերգած գրականությունը... «Զարեան ձեռքը սեղանին զարկաւ ու բղաւեց. - Ի՛մը: Իմ գրականութիւնը թէ՛ հայաստանեան է, թէ՛ սփիւռքային, թէ՛ խորք, թէ՛ թռիչք, թէ՛ լայնք, թէ՛ կենտրոն...» (Մ. 42):

Պայմանավորված իր առանձնահատկություններով՝ հակադրույթների կազմությանը մեծ մասնակցություն ունեն լեզվական ու խոսքային հականիշները: Լեզվական հականիշներով արտահայտված ցայտուն օրինակի հանդիպում ենք Վարազդատ Թյուրաքյանի դիմանակարում: Պեշիկթաշլյանը մերկացնում է կուսակցական և գրական այս վայ գործչի վարքագիծը, նրա բերած աղետը ազգային կյանքում, իսկ ամփոփելիս գրում է. «Վարազդատ Թիւ-

[18] **Օտեան** 1999, 29:

րապեան մեծ հասակով, մեծ գլուխով, մեծ փորով, մեծ յատակով՝ պզտիկ անձ մըն է» (Մ. 90)։

Հակադրույթներում ավելի մեծ կիրառություն ունեն խոսքային հականիշները։ Ընդունված է այն կարծիքը, որ այս միավորներն ավելի մեծ ոճական հնարավորություններով են օժտված, «քանի որ առանձին վերցրած միմյանց նկատմամբ հակադիր իմաստներ չունեն, այսինքն՝ լեզվական հականիշներ չեն, նշանակում է՝ խոսքի մեջ բառերի իմաստային տարողականության սահմանները ընդարձակվում են, և բառերը ձեռք են բերում հակադրական հարաբերություններ արտահայտելու լայն հնարավորություններ»[19]։

Վահան Թեքեյանի դիմանկարում հանդիպում ենք խոսքային, նաև լեզվական հականիշներով կազմված հակադրույթի օրինակների, որոնցում հեղինակը նաև բացահայտում է այս հականիշների արտահայտած իմաստային ենթատեքստերը. «Ունեցած է Եգիպտոսի մէջ կռնակ ու Փարիզի մէջ ոտքեր… Գացած է անյաջողութենէ յաջողութիւն, այսինքն ազգային գործերէ դէպ ի բանաստեղծութիւն եւ յաջողութենէ անյաջողութիւն, այսինքն Եգիպտոսէն Ֆրանսա» (Ծ. 39)։

Գրական դիմանկարներում առկա են նորակազմություններ, որոնց հեղինակն ստեղծել է հականիշ զույգեր կազմելու համար։ Այս հականիշ զույգերն էլ իրենց հերթին կազմել են հակադրույթներ, ինչպես *լույս տեսնել* և *մութ տեսնել* արտահայտությունները Բյուզանդ Թոփալյանի դիմանկարում։ Հերոսը տպարանատեր է, գրում է բանաստեղծություններ, որոնք լույս են տեսնում իր տպարանում։ Եթե տպագրամեքենան մարդ լիներ, գուցե ամոթահար լիներ կամ բողոքեր այս անտաղանդ ոտանավորների պատճառով. «Իր բանաստեղծութիւնները լոյս կը տեսնեն իր տպարանէն։ Իր տպարանն ալ մութ կը տեսնէ… իր բանաստեղծութիւններէն» (Մ. 149)։

Երբեմն Ն. Պեշիկթաշլյանը հակադրույթներ է կազմում դարձվածային զույգերի միջոցով. այսպիսի օրինակի հանդիպում ենք նկարիչ Զարեհ Մութաֆյանի ծաղրանկարում. «Հոգին կուտայ զինքը գովողին և հոգին կ'առնէ զինքը քննադատողին» (Մ. 138)։

Հակադրույթները երբեմն զուգակցվում են պատկերավորման այլ միջոցների հետ։ Այսպես է Ալեքսանդր Խատիսյանի դիմանկարում. հակադրույթն ու փոխաբերությունը միահյուսվել են և առաջին հայացքից դրանք տարանջատելն էլ դժվար է։ Այս հատվածը զետեղված է ծաղրանկարի վերջում և մի

[19] **Էլոյան** 1989, 156։

քանի տողով ամբողջացնում է ոչ միայն հերոսի դեմքը, այլև իր ժամանակի Հայաստանյան իրավիճակը, իսկ ընթերցողի մեջ խորը ցավ ու կսկիծ է արթնանում՝ ի տես թշվառ ու բզկտված Հայրենիքի ու նրա պատեհապաշտ կառավարիչների. «Բժիշկ ըլլալու տեղ հիւանդ եղաւ ու իրեն բժիշկ ընտրեց Հայոց ազգը, որ հակառակ իր հոգեվարք վիճակին, ըստ բաւականին լավ կերպով դարմանեց Խատիսեանը» (Ծ. 78):

Եզրակացություններ

Նշան Պեշիկթաշլյանի գրական դիմանակարները հատկորոշվում են տարբեր արժանիքներով՝ գաղափարական, գեղարվեստական, գեղագիտական և այլն: Դրանցից մեկն էլ ճոխ լեզուն է և զարմանալի պատկերավոր խոսքը, որին հասնելու համար հեղինակը դիմել է լեզվական զանազան, նաև՝ պատկերավորման միջոցների: Անշուշտ հոդվածում նշվածներով չի սահմանափակվում այս միավորների կիրառությունը Նշան Պեշիկթաշլյանի ծաղրանկարներում: Դրանք խիստ բազմազան են և մեծ քանակության, ուստի բոլորին չկարողացանք անդրադառնալ տեղի սղության պատճառով: Եթե փորձենք ամփոփել այս համառոտ քննությունը, ապա պիտի փաստենք, որ ոճական առումով այս միավորների հնարավորությունները անհելի են, և հաճախ սրանց առկայության հետ է կապված խոսքի արտահայտչականությունը, հագեցվածությունը, ազդեցիկությունը և այլն: Չափազանցությունները, նվազաբանությունները, փոխաբերությունները, համեմատությունները, հակադրույթները և այլն խոսքը հարստացրել են տարբեր նրբերանգներով, օժտել այլաբանական նշանակությամբ, հաղորդել երգիծական բնույթ, որը կախված ասելիքի առանձնահատկություններից՝ դրսևորվել է տարբեր կերպ՝ հումորայինից մինչև կծու հեգնական:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ամիրդովլաթ Ամասիացի 2005, Անգիտաց անպետ, Երևան, «Լուսաբաց հրատարակչատուն», 122 էջ:

Բալայան Ն. 2019, Հայ ինքնության կերպավորումը Նշան Պեշիկթաշլյանի գրական դիմանկարներում, Պատմաբանասիրական հանդես, Երևան, N2, էջ 115–129:

Էլոյան Ս. 1989, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 260 էջ:

Հայ հին և միջնադարյան քնարերգություն 1987, Երևան, «Լույս» հրատարակչություն, 464 էջ:

Մակարյան Ա. 2002, Արևմտահայ գրական դիմանկարը, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 310 էջ:

Մեծարենց Մ. 1981, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 456 էջ:

Պէշիկթաշլեան Ն. 2009, Ծաղրանկարներ, Երևան, ՎՄՀ-Պրինտ, 207 էջ:

Պէշիկթաշլեան Ն. 1954, Մոմիաներ, Փարիզ, imp. A. DER AGOPIAN, 158 էջ:

Պէշիկթաշլեան Ն. 1952, Նոր ծաղրանկարներ եւ բանֆլէներ, Փարիզ, տպագր. Հ. Ճարյան, 146 էջ:

Պողոսյան Պ. 1991, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 336 էջ:

Ջրբաշյան Էդ. 1980, Գրականության տեսություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 496 էջ:

Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ. 1980, Գրականագիտական բառարան, Երևան, «Լույս» հրատարակչություն, 352 էջ:

Սնապեան Պ. 2008, Երկու սպանդ, Պէյրութ, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, 248 էջ:

Տեր-Դավթյան Ք. 1984, Վկայաբանություն և վարք, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր», Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 428 էջ:

Օտեան Ե. 1999, Մեր երեսփոխանները. Մեր ազգային ժողովը, Երևան, «Մագաղաթ» հրատարակչություն, 268 էջ:

Арнольд С. 1973, Стилистика современного английского языка, Ленинград, «Просвещение», 304 с.

Ефимов А. 1961, Стилистика художественной речи, Москва, издательство Московского университета, 519 с.

САТИРИЧЕСКАЯ РОЛЬ ОБРАЗНЫХ ЛИНГВИСТИЧЕСКИХ СРЕДСТВ В КАРИКАТУРАХ НШАНА ПЕШИКТАШЛЯНА

АРАКЕЛЯН К.

Резюме

Ключевые слова: сатира, юмор, язык, речь, стиль, средство изображения, литературный портрет.

Тип литературного портрета получил интересное развитие в мировой и армянской литературе. Пройдя через века, он претерпел изменения и нашел уникальное отражение в западноармянской литературе 19 и 20 веков. К этому жанру обращались многие западноармянские писатели и поэты. Литературный портрет имел и другую направленность – сатиричес-

кую, а сатирический портрет был доведён до совершенства великими западноармянскими сатириками Акопом Пароняном и Ервандом Отяном.

К литературному портрету обращались также армянские писатели диаспоры, в том числе видный французско-армянский писатель Ншан Пешикташлян, наиболее известный как сатирик.Пешикташлян вдохнул новую жизнь в литературно-сатирический портрет, о чём свидетельствуют более сотни его портретов.

Их отличительной чертой является великолепный язык и удивительно образная речь, чему немало способствует обилие образных лингвистических средств, их правильное и уместное использование. Гиперболы, литоты, метафоры, сравнения, противопоставления и т.д. обогащали речь писателя различными оттенками, наделяли её иносказательным смыслом, придавали сатирический характер, который в зависимости от особенностей сказанного проявлялся по-разному.

THE SATIRICAL ROLE OF LINGUISTIC MEANS OF REPRESENTATIONS INNSHAN PESHIKTASHLIAN'S CARICATURES

ARAKELYAN K.

Summary

Keywords: satire, humour, language, speech, style, means of representation, literary portrait.

The type of literary portrait received a unique role and interesting development in world and Armenian literature. Having passed through centuries, it has undergone various changes and found a unique reflection in the Western Armenian literature of the 19th-20th centuries. Many Western Armenian writers and poets referred to this genre. Literary portrait had another direction, the satirical one, and the satirical portrait was brought to perfection by such prominent Western Armenian satirists as Hakob Paronian and Yervand Otian.

Armenian writers of diaspora also turned to literary portrait, including the famous French-Armenian writer Nshan Peshiktashlian, who is best known as a

satirist. Peshiktashlian leased new life into literary satirical portrait, as evidenced by more than a hundred of his portraits.

